



Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց շարժումը հազարամյակի խաչմերուկներում. նոր մարտահրավերներ և ռազմավարություններ» ծրագրի շրջանակներում:

ՄԱՅԻՍ - 2009, №3

2009 թվականի հունվարի 19-23-ը ժամում Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանի առաջին նիստում քննարկվել են Հայաստանի Հանրապետության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցները 2002-2007 թթ. ընթացքում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր չեների վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի (ԿՆԽՎԿ/CEDAW) իրականացման վերաբերյալ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի նստաշրջանի ընթացքում քննարկվել է նաև Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցը և Կանանց համահայկական միության սովետային զեկույցը:



2009 թ. հունվարի 19-ի առաջին նիստում համառոտ ելույթով հանդես եկավ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջենմա Հասարթյանը: Ելույթում ներկայացվել են 2002-2007 թթ. ժամանակահատվածն ընդգրկող այլընտրանքային զեկույցում արծարծված առանցքային հիմնախնդիրները, որոնք առնչվում են, մասնավորապես, Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությանը և քաղաքական որոշումների կայացման մակարդակում կանանց ցածր ներկայացվածության խնդրին, կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցության ակտիվացումը խոչընդոտող գեղեցիկ կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված ծրագրերի բացակայությանը, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գեղեցիկ հավասարակշռության հասնելու համար ժամանակավոր հատուկ միջոցների ավելի լայն կիրառման և կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությանը:

Ելույթում տրվել են գեղեցիկ հավասարության ձեռքբերման ոլորտում առկա խնդիրների լուծման մի շարք առաջարկություններ: Ելույթը լսվել է հետաքրքրությամբ և առաջացրել բազմաթիվ հարցեր, որոնց սպառիչ պատասխաններ են տվել Ջենմա Հասարթյանը և Ասոցիացիայի փոխնախագահ Լիլիթ Չաքարյանը և Ասոցիացիայի գեղեցիկ հետազոտությունների կենտրոնի փորձագետ Վլադիմիր Օսիպովը:

2009 թ. հունվարի 22-ին տեղի է ունեցել ճաշ-ճեպագրույց Հայաստանի ՀԿ-ների ներկայացուցիչների և Կոմիտեի անդամների միջև, որի ընթացքում Կոմիտեի անդամները բազմաթիվ հարցեր են տվել՝ կապված երկրում գեղեցիկ իրավիճակի, կանանց տնտեսական վիճակի, գեղեցիկ կրթության, կանանց իրավունքների պաշտպանության, բռնության և թրաֆիքինգի, ՀԿ-ների և իշխանությունների փոխհարաբերությունների մակարդակի, կանանց վիճակի բարելավմանն ուղղությամբ Հայաստանի կառավարության ընդունած Ազգային ծրագրի իրականացման արդյունավետության հետ: Բոլոր հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ: ՀԿ-ների ներկայացուցիչներից ստացած տեղեկատվությունը Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի անդամներին հնարավորություն տվեց նիստի ժամանակ, երբ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանը ներկայացրեց կառավարության պաշտոնական զեկույցը, մի շարք հարցադրումներ անել կառավարության պատվիրակության անդամներին:



Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջան

2009 թվականի հունվարի 19-23-ը Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանի առաջին նիստում քննարկվել են 2002-2007 թթ. ժամանակահատվածում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր չների վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցները: Նստաշրջանի շրջանակներում նախատեսված էր նաև Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի պատրաստած այլընտրանքային զեկույցի քննարկումը:

Ասոցիացիայի ներկայացուցիչները, այլընտրանքային զեկույցի հեղինակներ՝ Ասոցիացիայի նախագահ Ջեմմա Չասրաթյանը՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ, Ասոցիացիայի փոխնախագահ Լիլիթ Զաքարյանը և Գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետ Վլադիմիր Օսիպովը՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Չայաստանի մասնաճյուղի աջակցությամբ հնարավորություն ունեցան կառավարության զեկույցի քննարկման ընթացքում մասնակցելու կոմիտեի 43-րդ նստաշրջանին և ներկայացնելու Ասոցիացիայի այլընտրանքային զեկույցը:

նությանն ուղղված միջազգային իրավական չափորոշիչների համակարգման ուղղությամբ, – վավերացնելով կոնվենցիան՝ Չայաստանը ստանձնել է պարտավորություններ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և դրանց իրացման համար հավասար հնարավորությունների ապահովման, գենդերային կարծրատիպերի հաղթահարման, տղամարդկանց և կանանց վարքի սոցիալական ու մշակութային մոդելների փոփոխման ուղղությամբ, – հանրապետությունում շարունակվում է խտրականությունը կանանց նկատմամբ, հատկապես պետական կառավարման համակարգում քաղաքական մասնակցության ոլորտում և քաղաքական որոշումների կայացման մակարդակում:

Ասոցիացիան իր առջև խնդիր էր դրել իրականացնել մի շարք առանցքային ոլորտների և պարտավորությունների ուղղությամբ կոնվենցիայի կատարման անկախ գնահատում, վերհանել երկրում կոնվենցիայի իրականացումը խոչընդոտող հիմնախնդիրները, ինչպես նաև բացահայտել դրանց լուծման հնարավոր ուղիները կառավարությանը և պատասխանատու այլ կառույցներին հասցեագրված առաջարկությունների տեսքով:

Ասոցիացիայի՝ Չայաստանում ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման մասին այլընտրանքային զեկույց պատրաստելու նախաձեռնությունը ստացավ **ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (Վարշավա)** աջակցությունը և իրականացվեց **«Գենդերային գիտելիքները՝ որպես ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության ձևավորման նախադրյալ»** ծրագրի շրջանակներում:

Ձեկույցը պատրաստելիս Ասոցիացիայի փորձագետները ուղենիշ են ունեցել առաջին և երկրորդ պարբերական զեկույցների առնչությամբ



1. Այլընտրանքային զեկույցի մշակման արդիականությունը և պատրաստման սկզբունքները

Նախաձեռնելով այլընտրանքային զեկույցի մշակումը՝ Չամալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան ելնում էր հետևյալ հանգամանքներից.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (**ԿՆԽՎԿ/CEDAW**) համալիր փաստաթուղթ է, որն արտացոլում է ՄԱԿ-ի բազմամյա ջանքերը կանանց իրավունքների պաշտպա-



Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականները Հայաստանի կառավարությանը, որոնցում մտահոգություն է արտահայտվել, մասնավորապես, հետևյալի կապակցությամբ.

- քաղաքական կառույցներում կանանց ցածր ներկայացվածությունը և քաղաքականության մեջ կանանց մասնակցության բարձրացմանն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցների բացակայությունը,
- գործազրկության բարձր մակարդակը և զբաղվածության ոլորտում խտրական գործելակերպը,
- հասարակության մեջ գենդերային կարծրատիպերի տարածվածությունը,
- ընտանեկան բռնության տարածման և ազգային օրենսդրությունում բռնության վերաբերյալ հատուկ դրույթների բացակայությունը, թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի համապարփակ ռազմավարության բացակայությունը,
- պետական կառույցների և ոչ կառավարական կազմակերպությունների միջև կոնվենցիայի իրագործման ուղղությամբ սահմանափակ համագործակցությունը:

Ձեկույցի պատրաստման ընթացքում անցկացվել են ֆոկլուս խմբեր և մի շարք հանդիպումներ հասարակական և քաղաքական գործիչների, հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ակտիվիստների հետ, վերլուծվել են Ազգային վիճակագրական ծառայության և Քաղաքացիական ծառայության խորհրդի տվյալները:

Ձեկույցը պատրաստելիս փորձագետներն օգտագործել են Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի ու ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի 2002-2007 թթ. ընթացքում անցկացրած հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների նյութերը, ինչպես նաև նույն ժամանակահատվածում միջազգային և հանրապետության այլ հասարակական կազմակերպությունների իրականացրած մի շարք հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների արդյունքները:

Ձեկույցի պատրաստումն իրականացվել է Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ղեկավար սկզբունքների և այլընտրանքային զեկույց կազմելու հատուկ ուղեցույցների հիման վրա:

Հոդված առ հոդված վերլուծվել են հետևյալ հիմնախնդրային ոլորտները.

- Հայաստանում գենդերային հավասարության իրավական հիմքերը և իրական գործելակերպը.
- Ազգային մեխանիզմի ստեղծման հիմնախնդիրները.
- Դրական խտրականության կիրառման հնարավորությունները.
- Գենդերային կարծրատիպերի հաղթահարման հիմնախնդիրը.
- Թրաֆիքինգը, կանանց առևտուրը.
- Կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը.
- Խտրական գործելակերպը կրթության և առողջապահության ոլորտներում.
- Կանանց զբաղվածությունը, խտրականությունը աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում.
- Գյուղի կանանց հիմնախնդիրները:

Առավել մանրակրկիտ վերլուծություն է ներկայացվել երկու համակարգաստեղծ հիմնախնդիրների ուղղությամբ. 1) ազգային մեխանիզմը՝ որպես կոնվենցիայի իրագործման հսկողությունն իրականացնելու և պետական քաղաքականության մեջ գենդերային չափումը ներդնելու ամհրաժեշտ և պարտադիր պայման, 2) կանանց քաղաքական մասնակցությունը՝ որպես իշխանության մեջ քաղաքական որոշումների կայացման մակարդակում նրանց ցածր ներկայացվածության հիմնախնդիր, որը նվազագույնի է հասցնում կանանց՝ պետական քաղաքականության վրա ներազդելու հնարավորությունները և դրա հետևանքով նախադրյալներ է ստեղծում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում խտրական գործելակերպի ամրապնդման համար:

Իրավիճակը գնահատելիս հաշվի են առնվել հասարակական ֆորմացիայի կտրուկ փոփոխման սոցիալական հետևանքները, Հայաստանի զարգացման անցումային փուլի առանձնահատկությունները՝ դրա դժվար հաղթահարելի սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներով հանդերձ, որոնք հանգեցրել են գենդերային անհավասարակշռության և քաղաքականության մեջ ու որոշումների կայացման մակարդակում կանանց իրավունքների ոտնահարման, աշխատանքի շուկայում ձևավորել են խտրական գործելակերպ և գենդերային խտրազատում:

Հաշվի են առնվել առաջին և երկրորդ պարբերական զեկույցներից հետո անցած ժամանակահատվածում պետության ձեռնարկած միջոցները հասարակությունում կանանց դերի, քաղաքական



իշխանության մակարդակում և քաղաքական որոշումների կայացման գործընթացներում նրանց ներկայացվածության բարձրացման ուղղությամբ: Վերլուծվել է, թե ինչ չափով են դե յուրե ամրագրված սահմանադրական իրավունքներն ապահովում դե ֆակտո խտրական գործելակերպի բացառումը, ինչպես նաև նպաստում քաղաքական որոշումների կայացման մակարդակում տղամարդկանց և կանանց հավասարակշռված ներկայացվածությանը, հասարակությունում սոցիալական արդարության հաստատմանը և երկրի հետագա ժողովրդավարական զարգացմանը:

2. Նախապատրաստումը մասնակցությանը Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանին

CEDAW կոմիտեի աշխատանքի ընթացակարգով նախատեսվում է նախքան կառավարության զեկույցի քննարկումը լսել հասարակական կազմակերպությունների պատրաստած այլընտրանքային զեկույցները: 2007 թվականին CEDAW կոմիտեին Հայաստանից ներկայացվել է այլընտրանքային զեկույց, որը պատրաստել է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան: Ըստ սահմանված կարգի՝ Ասոցիացիայի զեկույցը հրապարակվել է հայերեն և անգլերեն, 2007 թվականի նոյեմբերին ներկայացվել երկրի հասարակայնությանը:

CEDAW կոմիտեի 43-րդ նստաշրջանից 12 օր առաջ զեկույցը ներկայացվել է կոմիտեի էլեկտրոնային կայքում: Ի լրումն՝ 2008 թվականի սկզբին մեր կողմից CEDAW կոմիտե է ներկայացվել նաև

«Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական ակնարկ» հետազոտության արդյունքների էլեկտրոնային տարբերակը:

Համաձայն սահմանված կարգի՝ 2009 թվականի հունվարի 16-ին Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան էլեկտրոնային փոստով CEDAW կոմիտեի քարտուղարություն է ներկայացրել 10-րդ ակնարկի բանավոր հաղորդման անգլերեն և ռուսերեն տեքստերը՝ միստի ժամանակ կոմիտեի անդամներին տրամադրելու համար:

3. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանի առաջին նիստը

CEDAW կոմիտեի դմբաց նիստը ժնկում առաջին անգամ էր անցկացվում, և հունվարի 19-ին այն սկսվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների Գերագույն հանձնակատարի ներկայացուցչի ողջույնի խոսքով: Ներկայացվեցին կոմիտեի՝ ռոտացիոն կարգով ընտրված նոր անդամները, դրան հաջորդեց կոմիտեի անդամի պարտականությունների պարտաճանաչ և սկզբունքային կատարման մասին նրանց երդման հանդիսավոր արարողությունը:

Այնուհետև տեղի ունեցավ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դմբակ նիստը, որտեղ ընտրվեց նոր նախագահ:

Նույն օրը՝ հունվարի 19-ին, ցերեկային միստում սկսվեց Հայաստանի հասարակական կազմակերպությունների այլընտրանքային զեկույց-





ների քննարկումը: Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի հրապարակած այլընտրանքային զեկույցը և նախագահի հաղորդման անգլերեն տեքստը սահմանված կարգով ներկայացվել էին CEDAW կոմիտեի քարտուղարություն և մինչև նիստի սկիզբը տրամադրվել կոմիտեի անդամներին:

Ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հարթթայնը իր բանավոր հաղորդման մեջ կոմիտեի անդամների ուշադրությունը հրավիրեց հանրապետությունում կանանց նկատմամբ խտրականության առկայության հետ կապված առանցքային հիմնախնդիրների վրա, շեշտվեցին այն հարցերը, որոնք անհրաժեշտ է առաջադրել Հայաստանի կառավարությանը խտրական գործելակերպը կանխարգելելու և փաստացի գենդերային հավասարության զեկույցին, ինչպես է իրականացվել կառավարության զեկույցի հետ ՀԿ-ների ծանոթացման գործընթացը,

- ի՞նչ չափով և ո՞ր հարցերի կապակցությամբ է Հայաստանի կառավարությունը հաշվի առել Ասոցիացիայի այլընտրանքային զեկույցում վեր հանված հիմնախնդիրները,
- ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է հողված կանանց նկատմամբ խտրականության վերաբերյալ,
- կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսված ի՞նչ հատուկ միջոցներ են ընդունվել Հայաստանում,
- արդյոք ազգային մեխանիզմը զբաղվո՞ւմ է կանանց վիճակով կամ գենդերային հավասարության հասնելու հիմնախնդիրներով,

... բոլոր մարդիկ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով ծնվում են ազատ ու հավասար, և որ յուրաքանչյուր որ օժտված է Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներով ու ազատություններով առանց որևէ տարբերակման, այդ թվում նաև առանց սեռի հատկանիշով տարբերակման,

... մարդու իրավունքների մասին միջազգային դաշնագրերի մասնակից պետությունները պարտավորություն ունեն ապահովելու կանանց և տղամարդկանց՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունքները:

ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱԾԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՐՈՇՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

- թյան հասնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: (Ելույթի տեքստը հրապարակվում է:)
- Ջեմմա Հարթթայնի ելույթից հետո կոմիտեի անդամները բազմաթիվ հարցեր ուղղեցին զեկույցի հեղինակներին, մասնավորապես՝
 - արդյոք Հայաստանում ստեղծվել է կանանց վիճակի բարելավման և գենդերային հավասարության առաջնության ազգային մեխանիզմ,
 - իրականացվո՞ւմ է գենդերային կրթություն, և ո՞րն է դրա դերը երկրում տղամարդկանց և կանանց հավասարության հասնելու գործում,
 - ի՞նչ չափով են իրավապաշտպան կազմակերպությունները զբաղվում գենդերային հիմնախնդիրներով,
 - ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում երկրում գենդերային կարծրատիպերը հաղթահարելու և հասարակության մեջ կնոջ դերի մասին հայրիշխանական պատկերացումները փոփոխելու ուղղությամբ,
 - արդյոք կառավարությունն անցկացնո՞ւմ է կոնվենցիայի իրականացման մոնիթորինգ,
 - ծանոթ են հասարակական կազմակերպությունները հանրապետության կառավարու-

- ի՞նչ իրավիճակ է Հայաստանում՝ կապված գենդերային բռնության և թրաֆիքինգի հետ,
 - ձևավորվե՞լ է երկրում գենդերային բաղադրիչը կառավարության ծրագրերում և օրենսդրությունում ներմուծելու գործելակերպ,
 - օգտագործվո՞ւմ է դրական խտրականությունը՝ որպես գենդերային հավասարության հասնելու մեխանիզմ,
 - արտացոլվա՞ծ են գենդերային հիմնախնդիրները աշխատանքային օրենսդրությունում:
- Ասոցիացիայի փորձագետները պատասխանեցին բոլոր հարցերին: Նկատի ունենալով, որ պատասխանների համար տրամադրվել էր ընդամենը 10 րոպե, պատասխանները տրվում էին հնարավորինս հակիրճ և կոնկրետ:
- Ասոցիացիայի փորձագետ Վլադիմիր Օսիպովը մեկնաբանեց Ասոցիացիայի տեսակետը կանանց վիճակի բարելավման ուղղությամբ ազգային մեխանիզմի բացակայության առնչությամբ, ինչպես նաև պարզաբանեց, որ Հայաստանի Սահմանադրության 14.1 հոդվածով արգելվում է խտրականությունը մի շարք հատկանիշներով, այդ թվում՝ սեռի հատկանիշով:



Ասոցիացիայի փոխնախագահ Լիլիթ Զաքարյանը, ներկայացնելով գենդերային կրթության ինստիտուցիոնալացման ուղղությամբ Ասոցիացիայի և ՀՀ կրթության և գիտության նախարարության համատեղ աշխատանքի փորձը, նշեց, որ գենդերային գիտելիքները նախադպրոցական, միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգում դանդաղ են ներդրվում: Երեխաների և երիտասարդության սոցիալականացման գործընթացն իրականացվում է առանց գենդերային բաղադրիչի, որի կապակցությամբ անհրաժեշտություն է զգացվում ընդլայնելու կրթական համակարգում գենդերային գիտելիքների շրջանակները:

Բազմաթիվ հարցերին տված պատասխաններում Զեննա Հասարայանը նշեց.

– Իրավապաշտպան կազմակերպությունների մեծ մասը գենդերայնորեն զգայուն չէ և, որպես կանոն, չի մասնագիտանում կանանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ, նպատակասլաց չի զբաղվում գենդերային հիմնախնդիրներով:

– Չնայած Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականներին՝ ուղղված կառավարությանը առաջին և երկրորդ գեկույցների առնչությամբ, այս անգամ ևս չանցկացվեցին կառավարության՝ կոնվենցիայի իրականացման մասին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ներկայացրած գեկույցի հրապարակային քննարկումներ, որի հետևանքով ոչ միայն ՀԿ-ները, ոչ միայն բնակչության լայն շրջանները, այլև պետական շատ կառույցների աշխատակիցները չծանոթացան գեկույցին:

– Հանրապետությունում կոնվենցիայի իրականացման մոնիթորինգ չի անցկացվում, ինչը առաջին հերթին կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմի բացակայության հետևանք է:

– Հանրապետության կրթության համակարգում անհրաժեշտ աշխատանք չի իրականացվում երեխաների, դեռահասների և երիտասարդության գենդերային սոցիալականացման միջո-

ցով հայրիշխանական կարծրատիպերը հաղթահարելու ուղղությամբ:

– Չեն ձեռնարկվում հատուկ միջոցներ գործադիր իշխանությունում գենդերային հավասարակշռության հասնելու ուղղությամբ, ինչն ամբողջությամբ կախված է իշխանական կառույցների քաղաքական կամքից: 15-տոկոսանոց գենդերային քվոտան չապահովեց խորհրդարանում կանանց փաստացի 15-տոկոսանոց ներկայացվածություն: Ներկայումս Ասոցիացիայի և ավելի քան 20 այլ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ Ազգային ժողով ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու առաջարկություն է ներկայացվել, այն է՝ գենդերային 15-տոկոսանոց քվոտան խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների ցուցակներում ավելացնել մինչև 30 տոկոս: Ընդ որում՝ ցուցակներում նախատեսել տղամարդկանց և կանանց այսպիսի ներկայացվածություն: յուրաքանչյուր եռյակում մյուս սեռի մեկ ներկայացուցիչ, իսկ ցուցակից կնոջ թեկնածությունը հանելու դեպքում նրան փոխարինել ցուցակի հաջորդ կնոջ թեկնածությամբ: Տվյալ փոփոխության ընդունումը մեծապես կախված է առաջատար Հանրապետական կուսակցությունից, որը ստացել է մանդատների գրեթե կեսը՝ 131-ից 64-ը, բայց խմբակցության կազմում ընդամենը մեկ կին է ընդգրկված:

– Զ ա ն գ վ ա ծ ա յ ի ն լրատվության միջոցները պատշաճ չափով չեն արտացոլում գենդերային հիմնախնդիրները և կանանց վիճակը, հաճախ ՁԼՍ-ներում վերարտադրվում են գենդերային կարծրատիպերը, և տեղ են գտնում սեքսիստական դրսևորումներ: Հարցերին տված պատասխանների ավարտին նշվեց նաև, որ իշխանության կառույցներում կառավարության ծրագրեր կազմելիս և օրենսդրություն մշակելիս տեղի է ունեցել որոշակի տեղաշարժ՝ գենդերային բաղադրիչի ներդրման անհրաժեշտության ընկալման առումով, ինչը նախադրյալներ է ստեղծում գենդերային բաղադրիչը ինչպես քաղաքական գործելակերպում, այնպես էլ օրինաստեղծ





աշխատանքում ներմուծելու համար: Ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծրագրի շրջանակներում խորհրդարանի, գործադիր իշխանության կառույցների և հասարակական կազմակերպությունների փորձագետների համատեղ խմբերի ուժերով մշակվել են «Պետական գենդերային քաղաքականության հայեցակարգի» և «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» օրենքի նախագծերը:

Ամփոփելով նստաշրջանի նիստի աշխատանքը՝ նախագահողը նշեց քննարկման կառուցողական բնույթը և շնորհակալություն հայտնեց հասարակական կազմակերպություններին ներկայացված զեկույցների, ինչպես նաև կոմիտեի անդամների հարցերին տված պատասխանների և մեկնաբանությունների համար:

Վերլուծելով նստաշրջանի նիստում հասարակական կազմակերպությունների զեկույցների քննարկման գործընթացը՝ հարկ է նշել, որ Հայաստանի ՀՀ-ների զեկույցների առնչությամբ հնչած հարցերի մեծ քանակությունը և ուղղվածությունը բացատրվում են կոմիտեի անդամների՝ ՀՀ կառավարության զեկույցում ներկայացված հիմնախնդիրները ճշտելու և պարզաբանելու շահագրգռությամբ, ինչպես նաև ՀՀ-ների ներկայացուցիչների կողմից դրանց մեկնաբանման անհրաժեշտությամբ:

4. Հայաստանի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի անդամների ճաշ-ճեպագրույցը

Հունվարի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և կոմիտեի անդամների ճաշ-ճեպագրույցը: Կոմիտեի անդամները նախատեսված տասի փոխարեն զգալիորեն ավելի մեծ թվով էին եկել ճեպագրույցի, ինչը վկայում է նրանց՝ նախքան կառավարության զեկույցը իրենց հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները ՀՀ-ների ներկայացուցիչներից ստանալու շահագրգռության մասին:

Ճեպագրույցն անցավ ակտիվ երկժամյա երկխոսության ձևաչափով: Դրա ընթացքում կոմիտեի անդամները ճշտում էին նիստի ժամանակ տված հարցերի պատասխանները՝ կապված, մասնավորապես, երկրում ազգային մեխանիզմի բացակայության մասին մեր պնդման, ընտանեկան բռնության և թրաֆիքինգի տարածման չափերի և դրանց կանխարգելման ուղղությամբ ձեռնարկ-

վող միջոցների, հասարակության մտածելակերպի առանձնահատկությունների և տարածված կարծրատիպերի հետ, ինչպես նաև «Կանանց համահայկական միություն» ՀԿ-ի ներկայացուցչի այն ձևակերպման հետ, թե «պետությունը հոգ է տանում միայն սեփական անվտանգության մասին, ոչ թե քաղաքացիների»:

Բացի այդ, կոմիտեի անդամները հետաքրքրվում էին այնպիսի հիմնախնդիրներով, ինչպիսիք են՝

- խտրականության առկայությունը զբաղվածության ոլորտում և աշխատանքի շուկայում, տղամարդկանց և կանանց աշխատավարձերի հարաբերակցությունը,
- քաղաքական ոլորտի որոշումների կայացման մակարդակում կանանց ցածր ներկայացվածության պատճառները,
- իշխանական կառույցների և ՀՀ-ների համագործակցության գործելակերպը,
- քաղաքական կուսակցությունների ծրագրերում գենդերային հիմնախնդիրների արտացոլման աստիճանը և դրանց աշխատանքը կանանց առաջնորդման ուղղությամբ,
- արհմիությունների դերը կանանց իրավունքների պաշտպանության գործում,
- մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումների թիվը, որոնք կապված են կանանց խտրականության և նրանց իրավունքների պաշտպանության հետ:

Պատասխանելով հարցերին՝ մեկ անգամ ևս նշեցինք Հայաստանում ազգային մեխանիզմի բացակայությունը, որի հետևանքով չի անցկացվում ԿՆԽՎ/CEDAW և այլ կոնվենցիաների և համաձայնագրերի հետ կապված պարտավորությունների իրականացման մոնիթորինգ, գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների համակարգումը դժվար է ընթանում, շարունակվում է սեռի հատկանիշով խտրականությունը քաղաքական որոշումների կայացման մակարդակում, լիարժեք չի իրականացվում օրենսդրության մեջ և քաղաքական գործելակերպում գենդերային բաղադրիչի ներդրման ռազմավարությունը:

Չնայած օրենսդրությունում կանանց բավական լայն իրավունքների ամրագրմանը՝ իրականում տեղի է ունենում խտրականություն, որը հաճախ չի ընկալվում որպես այդպիսին հասարակության մեջ կնոջ դերի մասին արմատացած կարծրատիպային պատկերացումների պատճառով:

Ի տարբերություն օրենսդրության, որը վերջին տարիներին համապատասխանեցվել է միջազգային չափորոշիչներին, երկրում իրականացվող քաղաքականությունը, գործելակերպը և ընթացա-



կարգերը դեռևս չեն վերանայվել՝ կանանց մարդու իրավունքների բնագավառում համապատասխան միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով:

Նշվել է, որ հանրապետությունում չեն իրականացվում գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված ծրագրեր: ՁԼՄ-ները, որոնք պետք է լինեն ժողովրդավարության մշակույթի տարածողները, շահագրգռություն չեն դրսևորում գենդերային հավասարության գաղափարի առաջնության և կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման հարցերում: Կանանց խնդիրների լուսաբանումը ՁԼՄ-ների գերակայությունը չի դարձել: Գենդերային հավասարության հարցերն այսօր մնում են կանանց կազմակերպությունների մենաշնորհը:

Իշխանական կառույցներում և խորհրդարանում իրականացվող լոբբինգի գործընթացների հետագա ակտիվացում՝ արագացնելու համար «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ընդունումը և կառավարության կողմից «Պետական գենդերային քաղաքականության հայեցակարգի» հաստատումը:

Ծեպագրույցի ավարտին այս նստաշրջանում հաշվետվությունների քննարկման փորձագետ, ՍԼՍԿԵԻԿԻ Գերկայացուցիչ Վիոլետա Նոյեաուերը Հայաստանի ՀԿ-ների ներկայացուցիչներին առաջարկեց առանձնացնել տարածաշրջանի կանանց երկու գլխավոր հիմնախնդիրները:

Որպես արդիական հիմնախնդիրներ նշվեցին. 1) աշխատատեղերի ստեղծումը և գործազրկության,

... «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած փարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տրամադրիկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգուրվելը:

Հոդված 1, ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՐՈՒՄԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՄ ԶԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կոմիտեի անդամների հետաքրքրությունների կենտրոնում էին «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի և «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագծերում արտացոլված հարցերը, ինչպես նաև դրանց պատրաստ լինելու աստիճանը և խորհրդարանում քննարկման ժամկետները:

Այս հարցին պատասխանելով՝ մեկնաբանել ենք, որ ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագրում, որն արժանացել է ՀՀ Ազգային ժողովի հավանությանը, կառավարության գերակայությունների շարքում նշվել է «Գենդերային հավասարության նվաճումը, տղամարդկանց և կանանց համար հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը»: Այս պարտավորությունը որոշակի վստահություն է ներշնչում դրական տեղաշարժերի և նշված օրենսդրական ակտերը խորհրդարանի քննարկմանը ներկայացնելու գործընթացի արագացման նախադրյալների առումով:

Անշուշտ, դա ենթադրում է նաև ՀԿ-ների կողմից

այդ թվում նաև տղամարդկանց գործազրկության հաղթահարումը՝ որպես հիմնախնդիր, որի լուծումը հնարավորություն կտա բարելավելու կանանց սոցիալ-տնտեսական վիճակը և ակտիվացնելու նրանց մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին, 2) հետագա արտագաղթի կանխումը՝ որպես հնարավորություն հաղթահարելու «հեռակա» ընտանիքների ինստիտուտը, երբ ամուսինը՝ մեկնելով արտագնա աշխատանքի, նյութապես ապահովում է ընտանիքը, բայց խախտվում են ընտանիքի կառուցվածքը և ներընտանեկան փոխհարաբերությունները:

5. Հունվարի 23-ի նիստը՝ նվիրված Հայաստանի կառավարության պատվիրակության գեկույցին

Հունվարի 23-ի առավոտյան նիստում լսվեց Հայաստանի կառավարության պատվիրակության գեկույցը, որով հանդես եկավ ՀՀ արտաքին գործերի փոխնախարար պարոն Արման Կիրակոսյանը: Ձեկույցի ներկայացումից հետո Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի անդամները բազմաթիվ հարցեր ուղղեցին կառավարության



պատվիրակության ներկայացուցիչներին:

Կառավարության պատվիրակության կազմում էին *Ձյունիկ Աղաջանյանը*՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ, *Անի Քոչարյանը*՝ նույն նախարարության միջազգային հարաբերությունների վարչության մարդու իրավունքների բաժնի երրորդ քարտուղար, *Արմենուհի Հարությունյանը*՝ ՀՀ արդարադատության նախարարության Եվրաինտեգրման և զարգացման բաժնի միջազգային իրավաբանական հարաբերությունների դեպարտամենտի գլխավոր մասնագետ, *Արմինե Թանաշյանը*՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի պետ, *Մարինե Աղաջանյանը*՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության համակարգի կանխատեսումների վարչության առաջատար մասնագետ, *Գայանե Ավագյանը*՝ ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ, *Նելլի Դուրյանը*՝ ՀՀ ոստիկանության քրեական հետապնդման գլխավոր վարչության պետի տեղակալ:

Կառավարության պատվիրակության ներկայացուցիչներին ուղղված հարցերի բովանդակությունը և ուղղվածությունը ցույց տվեցին, որ կոմիտեի անդամները մանրամասն ծանոթացել էին Հայաստանի ՀԿ-ների այլընտրանքային զեկույցներին, ինչպես նաև վերլուծել էին կոմիտեի 43-րդ նստաշրջանի հունվարի 19-ի նիստի և հունվարի 22-ի ճաշ-ճեպագրույցի երկխոսության ընթացքում նրանց ներկայացուցիչների բարձրացրած հիմնախնդիրները: Դրանցից առավել կարևորների կապակցությամբ հարցեր ուղղվեցին կառավարության պատվիրակության անդամներին:

6. Որոշ եզրակացություններ

1) Թեև ամենաբարձր մակարդակում որոշումներ կայացնող անձինք հստակ գիտակցում են և հնչեցնում են այն գաղափարը, որ կանանց նկատմամբ խտրականության վերացումը տղամարդկանց և կանանց միջև իրական հավասարության հիմնարար սկզբունքի իրականացման նախադրյալ է, այդուհանդերձ այդ սկզբունքը կենսագործելու քաղաքական կամքը բացակայում է:

2) Երկրի՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեի կատարման մասին զեկույցը չի ներկայաց-

վել ո՛չ ՀՀ կառավարության էլեկտրոնային կայքում, ո՛չ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (որը համարվում է կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմ), ո՛չ էլ ՀՀ արտաքին գործերի նախարարության (որը համակարգում է հաշվետվության պատրաստումը) էլեկտրոնային կայքերում:

3) Չնայած Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականներին Հայաստանի Հանրոդ զեկույցի առնչությամբ՝ կառավարության զեկույցը չի քննարկվել ո՛չ կառավարության մակարդակով, ո՛չ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում և այլ նախարարություններում ու գերատեսչություններում, որոնք կոչված են իրականացնելու կոմիտեից հան: Չի եղել նաև ՀԿ-ների հետ լայն քննարկում-երկխոսություն:

Մինչև այժմ ՁԼՄ-ներում չի հրապարակվել որևէ տեղեկատվություն Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեում կառավարության զեկույցի նախապատրաստման ընթացքի և ներկայացման մասին:

4) ՀԿ-ների այլընտրանքային զեկույցների անհրաժեշտությունը արդիական է այն առումով, որ դրանք ոչ միայն կոմիտեից հանդիմանալի գնահատում՝ ըստ մի շարք առանցքային դրույթների: Ուսումնասիրված տվյալների և նյութերի վերլուծությունը, մշակված հանձնարարականները, որոնք հասցեագրված են առաջին հերթին ՀՀ կառավարությանը, քաղաքացիական հասարակության ինստիտուտներին և բոլոր շահագրգիռ հիմնարկներին, կարող են օգտագործվել գերակայությունները և խնդիրները հստակեցնելու համար՝ ավելի արդյունավետ համակարգման և համագործակցության նպատակով:

5) Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանում հաշվետվությունների քննարկումը մեկ անգամ ևս հաստատում է հայրիշխանական կարծրատիպերի հաղթահարման, նոր էզալիտար ժողովրդավարական գեներացիային մշակույթի և գեներացիային հավասարության սկզբունքի՝ որպես համամարդկային արժեքի ձևավորման համար ՀՀ կառավարության շարունակական, համակարգված և արդյունավետ ջանքերի, ինչպես նաև կառավարության և հասարակական կազմակերպությունների միջև սոցիալական համագործակցության հաստատման անհրաժեշտությունը:



Կոնվենցիայի իրականացման անկախ գնահատումը գենդերային խտրականության հաղթահարման գրավական է



Ջեյնա Հասրաթյանի ելույթը Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի անունից

Հարգելի տիկնայք և պարոնայք,
Ասոցիացիան իր առջև նպատակ էր դրել իրականացնել կոնվենցիայի կատարման անկախ գնահատում ըստ մի շարք առանցքային ոլորտների և պարտավորությունների, բացահայտել մեր երկրում Կոնվենցիայի իրականացումը խոչընդոտող հիմնախնդիրները, ինչպես նաև նախանշել դրանց լուծման հնարավոր ուղիները կառավարությանը և այլ պատասխանատու կառույցներին հասցեագրված առաջարկությունների ձևով:

Նման մոտեցումը հնարավորություն է տվել ներկայացնելու դե յուրե և դե ֆակտո իրավիճակը և կենտրոնանալու բացասական գործելակերպի հաղթահարման ուղղված առաջարկությունների վրա:

Այլընտրանքային զեկույցի մշակման ընթացքում ուղենիշ ենք ունեցել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի կառավարությանն ուղղված եզրակարգող դիտողությունները և հանձնարարականները նրա երկրորդ պարբերական զեկույցի կապակցությամբ:

Առավել մանրակրկիտ վերլուծություն է ներկայացված երկու համակարգաստեղծ հիմնախնդիրների առնչությամբ.

- **ազգային մեխանիզմը՝ որպես անհրաժեշտ և պարտադիր պայման կոնվենցիայի կատարման վերահսկումն իրականացնելու և գենդերային չափումը պետական քաղաքականության մեջ ինտեգրելու համար,**
- **կանանց քաղաքական մասնակցությունը և քաղաքական որոշումների կայացման մակարդակում կանանց թերի ներկայացվածության խնդիրը, ինչը նվազագույնի է հասցնում կանանց՝ պետական քաղաքականության վրա ազդելու հնարավորությունները և դրա հետևանքով ամրապնդում է խտրական գործե-**

լակերպը հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում:

Ջեկույցը պատրաստելիս օգտագործվել են 2002-2007 թթ. ընթացքում Ասոցիացիայի անցկացրած մի շարք հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների նյութերը: Ջեկույցի պատրաստման ընթացքում անցկացվել են ֆոկլուս խմբեր և հանդիպումներ հասարակական և քաղաքական գործիչների, ՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների ակտիվիստների հետ:

Երկրորդ պարբերական զեկույցից հետո ընկած ժամանակահատվածում, իրոք, Կոնվենցիայի իրականացման միջոցներ են ձեռնարկվել, մասնավորապես՝ հասարակության մեջ կանանց դերի բարձրացման ուղղությամբ: Խտրական գործելակերպը հաղթահարելու և Հայաստանի վավերացրած միջազգային փաստաթղթերի, հատկապես Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի բովանդակած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով 2004 թվականի ապրիլի 8-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը», ստեղծվել են հանրապետության վարչապետին կից կանանց խորհուրդ և գենդերային հիմնախնդիրների միջգերատեսչական հանձնաժողով:

Վավերացվել են Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը:

Օրենսդիր իշխանության մեջ կանանց ներկայացվածությունը մեծացնելու նպատակով խորհրդարանական ընտրություններում քաղաքական կուսակցությունների առաջադրած թեկնածուների ցուցակներում կանանց համար նվազագույն քվոտան 5 տոկոսից բարձրացել է մինչև 15 տոկոս: 2003 թվականի համեմատությամբ 2007 թվականին կանանց թիվը խորհրդարանում ավելացել է 4,1 տոկոսով: Առաջին անգամ ՀՀ խորհրդարանի փոխնախագահ կին է ընտրվել:

Որոշ չափով կանանց թիվը մեծացել է գործադիր իշխանության քաղաքական որոշումների կայացման մակարդակում: Երկու կին նախարարներ են նշանակվել, մեկ՝ մարզպետ, մեկ՝ փոխմարզպետ:

Այսուհանդերձ, չնայած ձեռնարկված միջոցներին, կառավարման համակարգում՝ որոշումների



ընդունման մակարդակում, գենդերային ներկայացվածությունը մնում է չհավասարակշռված: Դեռևս ցածր է կանանց ներկայացվածությունը խորհրդարանում՝ 8,6 տոկոս: Խորհրդարանի 12 մշտական հանձնաժողովներից 7-ում ոչ մի կին չկա:

2002 թվականի համեմատությամբ 2008 թվականին կանանց տեսակարար կշիռը նախարարների և փոխնախարարների մակարդակում 8 տոկոսից նվազել է մինչև 2,4 տոկոս: 65 փոխնախարարների թվում միայն մեկ կին կա, 19 փոխնարզպետներից միայն մեկն է կին: Գենդերայնորեն չհավասարակշռված ներկայացվածության միտումը շարունակվում է քաղաքացիական ծառայության բարձր պաշտոններում, որտեղ կանայք կազմում են 11 տոկոս:

Ստահոգիչ է այն փաստը, որ տարիներ շարունակ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը, որտեղ կանայք կազմում են աշխատողների ավելի քան 70 տոկոսը, նախարարությունների ղեկավարության կազմում կանայք բացակայում են:

Գենդերային անհավասարակշռությունը պահպանվում է քաղաքապետարանների և համայնքների ինքնակառավարման մարմինների ղեկավար պաշտոններում: Ժողովրդավարական վերափոխումների ողջ ընթացքում 48 քաղաքապետների և 51 փոխքաղաքապետների պաշտոններում կին չի եղել: Կանայք կազմում են քաղաքային ավագանիների անդամների 4,3 տոկոսը, իսկ գյուղական համայնքների միայն 2,6 տոկոսն է կին գլխավորում:

Վերջին 10 տարիների ընթացքում Երևանի քաղաքապետի պաշտոնում կին չի առաջադրվել, մայրաքաղաքի 12 համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոններում նույնպես կին չկա: Կանայք կազմում են Երևանի համայնքների ավագանիների անդամների 4,7 տոկոսը:

Որակավորված կադրային ներուժի պատրաստումն իրականացվում է առանց գենդերային գործոնի հաշվառման և չի համապատասխանում կառավարման համակարգի հետագա ժողովրդավարացման ժամանակակից պահանջներին: Գենդերային կրթության բացակայությունը կառավարչական կադրերի պատրաստման համակարգում և բոլոր մակարդակների պետական պաշտոնյաների շրջանում կասկածի տակ է դնում նրանց՝ գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու անհրաժեշտության գիտակցումը:

Դե յուրե ամրագրված սահմանադրական իրավունքները չեն բացառում դե ֆակտո խտրական գործելակերպը, որի հիմքը իրական կյանքում կազմում են.

- քաղաքական պաշտոնների և որոշումների կայացման մակարդակում պետական իշխանության մարմինների անհավասար մատչելիությունը տղա-

- մարդկանց և կանանց համար,
- տղամարդկանց և կանանց անհավասար դիրքը տնտեսական ոլորտում,
- հասարակության մեջ և ընտանիքում գենդերային դերերի ավանդական բաշխումը, որը պահպանվում և ամրապնդվում է բոլոր հասարակական ինստիտուտներով:

Գնահատելով գենդերային իրավիճակը Հայաստանում՝ հարկ է նշել, որ հանրապետության հասարակական և պետական ինստիտուտների գործունեությունը չի կարող գենդերայնորեն զգայուն համարվել և չի բացառում կանանց նկատմամբ խտրական գործելակերպը: Չնայած կանանց բարձր կրթական մակարդակին և քաղաքացիական ներուժին՝ նրանց դերը խիստ սահմանափակ է քաղաքականության, տնտեսության մեջ և հասարակական կյանքում: Կանանց օտարումը կառավարման համակարգի որոշումների կայացման մակարդակից, ղեկավարման տղամարդկային ոճը հանգեցնում են ժողովրդավարության ճեղքվածքի և հակասում են ներկայացուցչական ժողովրդավարության հիմնական սկզբունքներին:

Երկրի խորհրդարանում՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում և գործադիր իշխանության համակարգի որոշումների կայացման մակարդակում գենդերայնորեն հավասարակշռված ներկայացվածության հաստատման և կանանց քաղաքական ակտիվության բարձրացման նպատակով իրավիճակը փոխելու համար **նպատակահարմար ենք համարում, որ կառավարությունը՝**

- արագացնի Պետական գենդերային քաղաքականության հայեցակարգի ընդունումը,
- նախաձեռնի «Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» օրինագծի ներկայացումը երկրի խորհրդարանի քննարկմանը,
- քաղաքական կուսակցությունների գործունեության ֆինանսական աջակցությունն իրականացնի գենդերային բաղադրիչի հաշվառմամբ:

Մեր կարծիքով, և կցանկանայինք սա առանձնապես շեշտել, Հայաստանում մինչև այժմ ազգային մեխանիզմ չի ձևավորվել: Ոչ կանանց հարցերը համադասող փոխնախարարի պաշտոնը, ո՛չ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը չեն կարող համարվել այդպիսին, քանի որ չեն համապատասխանում թե՛ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 6 Ընդհանուր հանձնարարականների մեջ, թե՛ Պեկինի գործողությունների ծրագրում սահմանված



ազգային մեխանիզմի մանդատին և չափանիշներին:

Այս հարցում որոշ թյուրըմբռնում կա, որը ինչ-որ չափով հետևանք է այն իրողության, որ Հայաստանում հստակ չեն տարբերակվում ինստիտուցիոնալ մեխանիզմները և ազգային մեխանիզմը: Այսօր գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ ո՛չ առանձին վերցրած, ո՛չ էլ որպես համալիր, չեն համապատասխանում այն չափանիշներին, որոնք վերագրվում են ազգային մեխանիզմին, քանզի այդ կառույցներից և ոչ մեկը **հակախտրական քաղաքականություն և գեղեցիկության հավասարության քաղաքականություն չի մշակում և չի կիրարկում, չի համակար-**



գում կառավարության մարմինների գործողությունները տվյալ ոլորտում:

Ազգային մեխանիզմի և գործող ինստիտուցիոնալ մեխանիզմների հստակ համակարգման բացակայության պայմաններում հանրապետության պետական մարմինները խտրական դրսևորումների բացահայտման գործելակերպ չեն կիրառում՝ դրանք ժամանակին չեզոքացնելու նպատակով: Նաև վերահսկողություն չի իրականացվում որոշումների կայացման մակարդակում կանանց ներկայացվածության միտումները բացահայտելու համար:

Ազգային մեխանիզմի բացակայության հետևանքով՝

- ձգձգվում է *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով և այլ կոնվենցիաներով ու դաշնագրերով ստանձնած պարտավորությունների կատարումը,*
- *դժվարանում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ մեխանիզմների գործունեության համակարգումը,*
- *լիարժեք չի իրականացվում օրենսդրության մեջ և քաղաքական գործելակերպում գեղեցիկության բաղադրիչի ներառման ռազմավարությունը,*
- *շարունակվում է սեռի հատկանիշով խտրականու-*

թյունը ղեկավար մարմիններում և որոշումների կայացման մակարդակում, օրենսդիր և գործադիր իշխանության մեջ կանանց ներկայացվածության հարցում:

Այս կապակցությամբ *անհրաժեշտ ենք համարում առաջարկել Հայաստանի կառավարությանը* ձևավորել միջազգային չափորոշիչներին համապատասխանող արդյունավետ ազգային մեխանիզմ, որը կդառնա գեղեցիկության հավասարության ազգային հայեցակարգի քաղաքականության և ռազմավարության մշակման և իրականացման առանցքային կառույցը:

Կցանկանայինք անդրադառնալ ևս մեկ խնդրի. 2002 թվականին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն երաշխավորել է քվոտավորման՝ որպես իշխանության մեջ գեղեցիկության անհավասարակշռության հաղթահարման միջոցի օգտագործումը: Ըստ 2007 թվականի ընտրությունների արդյունքների՝ թեև ներկայումս գործող 15-տոկոսանոց քվոտան նպաստել է կուսակցական ցուցակներում կանանց թվի ավելացմանը մինչև 22,6 տոկոս՝ 2003 թվականի 14,2 տոկոսի դիմաց, այդուհանդերձ չի ապահովել կանանց 15-տոկոսանոց ներկայացվածությունը խորհրդարանում:

Խորհրդարանի ներկայիս կազմում 15-տոկոսանոց ներկայացվածություն ապահովել է երեք կուսակցություն՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, Հայ հեղափոխական դաշնակցությունը և «Ժառանգություն» ընդդիմադիր կուսակցությունը (ընդ որում՝ վերջինս ապահովել է 42 տոկոս): Խորհրդարանում մեծամասնություն կազմող Հանրապետական կուսակցության խմբակցության կազմում 64 պատգամավորներից, որոնք ներկայացնում են ընդհանուր պատգամավորական կազմի կեսը, միայն մեկն է կին:

Մենք խնդրում ենք Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին երաշխավորել Հայաստանի կառավարությանը աջակցել կանանց 23 կազմակերպությունների նախաձեռնությանը և օրենսդրական նախաձեռնության շրջանակներում առաջարկություն ներկայացնել խորհրդարան ՀՀ ընտրական օրենսգրքում 30-տոկոսանոց գեղեցիկային քվոտա նախատեսելու մասին:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է նաև առաջարկել քաղաքական կուսակցություններին աշխուժացնել աշխատանքը կանանց հետ, ավելի ակտիվ առաջադրել նրանց կուսակցության ղեկավար կազմում, ընդլայնել փորձի փոխանակումը այլ երկրների քաղաքական կուսակցությունների հետ, որոնք գեղեցիկային հավասարակշռության հասնելու և դրական գործողությունների մեթոդներ կիրառելու լավ փորձ ունեն:

Մենք արդարացի ենք համարում Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմի-



տեի մտահոգությունը մեր երկրում՝ ընտանիքում և հասարակության մեջ հայրիշխանական հարաբերությունների առկայության կապակցությամբ և նշում ենք, որ հանրապետությունում դեռևս չկան **գենդերային կարծրատիպերի հաղթահարման** ուղղված ծրագրեր, ինչպես նաև հատուկ արշավների անցկացման գործելակերպ: Անհանգստություն է առաջացնում այն հանգամանքը, որ ԶԼՄ-ները, լինելով ժողովրդավարության մշակույթը տարածող, շահագրգռություն չեն դրսևորում գենդերային հավասարության գաղափարի առաջնդման և կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման հարցում:

Գենդերային հավասարության հարցերը ներկա դրությամբ մնում են առավելապես կանանց կազմակերպությունների առանձնաշնորհը:

Նախադարձական, միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգում գենդերային գիտելիքները դանդաղ են ներդրվում, որի հետևանքով երեխաների և ժամանակակից երիտասարդության սոցիալականացման գործընթացն իրականացվում է առանց գենդերային բաղադրիչի:

Գենդերային կրթությունը հիմնականում իրականացվում է հանրապետության հասարակական սեկտորի ջանքերով, ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության համակարգում:

Մեր Ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (Վարչակա) աջակցությամբ իրականացնում է գենդերային կրթության ինստիտուցիոնալացումը **երկրի 15 համալսարաններում և 30 հանրակրթական դպրոցներում**: Մշակվել են «Պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքները գենդերային կրթության բնագավառում», հրատարակվել են ծրագրեր, մեթոդական և ուսումնական ձեռնարկներ:

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ գենդերային գիտելիքներ ստացած ուսանողների մեջ տարեցտարի ձևավորվում են այնպիսի ժողովրդավարական արժեքներ, ինչպիսիք են կանանց քաղաքացիական դիրքորոշման և հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքների հարգումը, նկատվում է գենդերային հավասարության դրական ընկալում, հաղթահարվում են հայրիշխանական կարծրատիպերը:

Մեր առաջարկությունները ՀՀ կառավարությանը.

- *ավելի լայնորեն ներդնել գենդերային կրթությունը միջնակարգ դպրոցի համակարգում և համալսարաններում՝ աճող սերնդի մեջ էզալիտար ժողովրդավարական մշակույթի ձևավորման և գենդերային*

րային կարծրատիպային պատկերացումների հաղթահարման նպատակով,

- *նպաստել գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և կանանց հասարակական-քաղաքական ակտիվության քարոզչությանը, ԶԼՄ-ներում գենդերային քաղաքականության ձևավորմանը:*

Այսպիսով, մենք համարում ենք, որ.

- չնայած հանրապետության օրենսդրությունում կանանց բավական լայն իրավունքների ամրագրմանը՝ իրականում գոյություն ունի խտրականություն, որը հաճախ չի ընկալվում որպես այդպիսին՝ հասարակության մեջ կնոջ դերի մասին արմատացած կարծրատիպային պատկերացումների պատճառով,

- հանրապետության կառավարությունը դեռևս արդյունավետ միջոցներ չի ձեռնարկում կանանց նկատմամբ խտրականության հաղթահարման ուղղությամբ թե՛ պետական կառավարման ոլորտում՝ որոշումների կայացման մակարդակում, թե՛ աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում: Հետևանքն այն է, որ կանանց ազդեցությունը հասարակական և տնտեսական գործընթացների, պետական քաղաքականության վրա շարունակում է նվազել:

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք, ավարտելով ելույթը՝ անհրաժեշտ են համարում նշել, որ ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության 2008-2012 թթ. ծրագրում որպես գերակայություն ամրագրված է. «Նպատակադրելով հանրային համերաշխության հաստատումը, սոցիալական պետության կերտումը և սոցիալական արդարության արմատավորումը՝ կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու գենդերային հավասարությանը՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում, տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը»:

Որպես վերը նշված ծրագրի իրականացման գործում կառավարության և ՀԿ-ների սոցիալական գործընկերության դրական փաստ՝ մենք նշում ենք, որ փորձագիտական խմբերը, որոնց կազմում ընդգրկված են իշխանական կառույցների և ՀԿ-ների ներկայացուցիչներ, արդեն մշակել են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև «Պետական գենդերային քաղաքականության հայեցակարգը», որոնք արժանացել են միջազգային փորձագետների բարձր գնահատականին: Սա որոշակի վստահություն է ներշնչում, որ մոտ ապագայում երկրում դրական փոփոխություններ կլինեն:



Ժնկյան տպավորություններ կոմիտեի նստաշրջանից



2009 թ. հունվարի 19-23-ը մասնակցեցի Կանանց նկատմամբ խտրականության վերացման (CEDAW) կոմիտեի 43-րդ նստաշրջանին՝ նվիրված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացմանը, որից ստացած տպավորություններս էլ ուզում եմ ներկայացնել ընթերցողին:

Նախ հիշեցնեմ, որ Հայաստանը կոնվենցիան վավերացրել է 1993 թ.: Եվ վավերացնելուց հետո, ինչպես և յուրաքանչյուր մասնակից պետություն, պարտավոր էր մեկ տարվա ընթացքում սկզբնական և ապա չորս տարվա պարբերականությամբ զեկույց ներկայացնել CEDAW կոմիտեին կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ: Մինչ այդ Հայաստանը ներկայացրել էր երկու զեկույց՝ 1994 թ. սկզբնական զեկույցը, որը քննարկվել է 1997 թ., և 1998 թ., որը քննարկվել է 2002 թ.: Այս անգամ Հայաստանը ներկայացրել էր երրորդ և չորրորդ հերթական զեկույցները:

Մենք՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փորձագետներս, ժնկ էինք մեկնել՝ մասնակցելու կոմիտեի նստաշրջանին նախապես պատրաստված այլընտրանքային գե-

կույցով, որում հանգամանորեն վերլուծված է ՀՀ-ում 2002-2007 թթ. կոնվենցիայի իրականացման ընթացքը, ներկայացրել էինք նաև զեկույցին հաջորդող ժամանակաշրջանի գենդերային իրավիճակի վերլուծության նյութեր: Ընդ որում, անհամեստություն չդիտվի, մեր զեկույցը՝ Ջեմմա Չասթայանի, Թամարա Չովնաթանյանի, Վլադիմիր Օսիպովի և իմ հեղինակությամբ, արժանացավ կոմիտեի անդամների բարձր գնահատականին, ավելին, ինչպես ցույց տվեցին հետագա քննարկումները, այն ուղեցույց դարձավ քննարկվող հարցերը ձևակերպելու համար:

Հենց առաջին քննարկումը ցույց տվեց, որ կոմիտեի անդամներին հետաքրքրում են գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմի, կանանց քաղաքական մասնակցության, գենդերային կրթության, խտրականության տարբեր դրսևորումների, բռնության, ընտրական քվտաների և այլ հիմնահարցեր:

Չափազանց հետաքրքիր էր հիմնախնդիրների քննարկման մեխանիզմը: Նախ՝ այլընտրանքային զեկույցի հեղինակները ներկայացնում են կարճ հաղորդումներ: Հայաստանից ներկայացված էր երկու այլընտրանքային զեկույց՝ Ասոցիացիայինը և Համահայկական կանանց միության ու «Ժողովրդավարությունն այսօր» կազմակերպության համատեղ զեկույցը: Այնուհետև կոմիտեի անդամները հարցեր են տալիս զեկույցների հեղինակներին՝ պարզելու համար այս կամ այն իրողությունը, անհասկանալի մնացած հիմնախնդիրը և այլն:

Եվս մի հետաքրքիր հանգամանք. ՀՀ-ների ներկայացուցիչները կարող են ճաշ-ճեպագրույցի հրավիրել կոմիտեի անդամներին

և նրանց հետ միասին պարզաբանել իրենց հուզող հիմնախնդիրները: Քանի որ կոմիտեի անդամների համար ճեպագրույցին ներկայանալը պարտադիր չէ, կարծում էի՝ շատ քիչ մարդ կգա: Բայց, ի զարմանս ինձ, կոմիտեի քսաներեք անդամներից եկել էին տասներկուսը, այդ թվում՝ կոմիտեի հատուկ զեկուցողը: Մոտ մեկուկես ժամ տևած ճեպագրույցի ընթացքում կոմիտեի անդամները հարցեր էին տալիս, պարզաբանումներ կատարում, հետաքրքրվում, թե մենք ինչպես ենք մոտենում այս կամ այն հարցին:

Երկու օր անց կոմիտեի անդամները ՀՀ-ների փորձագետների գրույցի ընթացքում պարզաբանված հարցերն ուղղեցին ՀՀ կառավարության պատվիրակության անդամներին: Պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանը: Նա մասնակցեց նիստի առաջին ժամին և ներկայացրեց երկրի զեկույցը: Պատվիրակության կազմում ներկայացուցիչներ կային գրեթե բոլոր նախարարություններից, և յուրաքանչյուրը տալիս էր իր ուղորտին վերաբերող հարցերի պատասխանները: Հարցերը բաժանված էին չորս խմբի՝ ըստ կոնվենցիայի հոդվածների հերթականության: Առաջադրվում էին մի խմբի հարցերը, տրվում էին դրանց պատասխանները, ապա անցնում էին հաջորդ խմբին:

Կոմիտեի անդամներն իրենց ելույթներում գնահատում էին Հայաստանի նախորդ զեկույցներից հետո կատարված դրական տեղաշարժերը, նշում բացթողումները: Հետաքրքիր էր կոմիտեի անդամներից մեկի կեսկատակ-կեսլուրջ դիտողությունը. նա ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ պատվիրակության ան-



դամ տղամարդիկ, ինչպես միշտ, հեռացան՝ ամբողջ ծանրությունը թողնելով կանանց վրա: Եվ հույս հայտնեց, որ հաջորդ զեկույցի քննարկման ժամանակ Յայաստանի պատվիրակության ղեկավարը կին կլինի:

Կոմիտեի անդամներին հետաքրքրում էր, թե ինչու Յայաստանում դատաքննության ընթացքում կոնվենցիայի հոդվածների հիշատակման որևէ նախադեպ չկա, արդյոք բոլոր պաշտոնյաները տեղյա՞կ են կոնվենցիային և ըմբռնո՞ւմ են խտրականության երևույթը, քանի՞ կին է դիմել մար-

ցիան»: Այնուհետև բնական հարց ծագեց՝ իսկ ի՞նչ են անում իշխանությունները, որպեսզի խրախուսեն ՁԼՄ-ներում գենդերային հավասարության հիմնախնդիրը լուսաբանելու և գովազդում կանանց նկատմամբ կարծրատիպային պատկերացումներին վերջ տալու համար:

Հարցերի մի մասն էլ վերաբերում էր կենցաղային մշակույթին, օրինակ՝ ինչո՞ւ է Յայաստանում աբորտների քանակը այդքան մեծ, լինո՞ւմ են արդյոք աղջիկներին փախցնելու կամ վաղ տարիքում հարկադիր ամուսնացնելու

խտրականության դրսևորումները, որ խտրականության հաղթահարման համար անհրաժեշտ են ազդեցիկ միջոցներ և «պոզիտիվ քայլեր»: Դա վերաբերում է հատկապես մարզինալ խմբերի կանանց, նշվեցին նաև գյուղի, ազգային փոքրամասնությունների և հաշմանդամ կանայք: Անհրաժեշտ է, որ խտրականությանը վերաբերող դատական գործերում հիշատակվեն կոնվենցիայի համապատասխան հոդվածները, ինչը կոնվենցիայի դրույթները հրապարակելու յուրահատուկ ձև է:

Նիստի ընթացքում հարցադ-

Մասնակից պեպուրյունները բոլոր մասնավորապես, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային բնագավառներում չեղնարկում են բոլոր համապատասխան, ներառյալ օրենսդրական միջոցները՝ ապահովելու կանանց լիարժեք զարգացումն ու առաջադիմությունը, որպեսզի նրանց համար երաշխավորվեն տղամարդկանց հետ հավասարության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգուտները:

Հոդված 3, ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՐ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՐ ՉԵՎԵՐԻ ՎԵՐԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

դու իրավունքների պաշտպանին կանանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրներով, ինչո՞ւ տղաների համար ամուսնության տարիքը սահմանվել է տասնութ տարի, իսկ աղջիկների համար՝ տասնյոթը, ինչո՞ւ է պայմանավորված այդ մեկ տարվա տարբերությունը, ինչո՞ւ մինչ այժմ Յայաստանում գենդերային հիմնախնդիրների լուծման համար ազգային մեխանիզմ չի ձևավորվել, արդյոք օրենքների բոլոր նախագծերը ենթարկվո՞ւմ են գենդերային վերլուծության, ՀՀ բյուջեում կա՞ արդյոք հատուկ «գենդերային տող» և այլն: Հատուկ նկատառումներ արվեցին ՁԼՄ-ների հասցեին, որոնք հազվադեպ են անդրադառնում խտրականությանը և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և շեշտվեց. «Իհարկե, լրագրողները ազատ են, բայց նրանք պարտավոր են հարգել կոնվեն-

դեպքեր, ի՞նչ վիճակում են ազգային փոքրամասնությունների կանայք, որքանո՞վ են տարածված սեռական ոտնձգությունները աշխատանքի վայրում, որքանո՞վ է տարածված ընտանեկան բռնությունը, մարմնավաճառության համար պատասխանատվություն է կրում մարմնավաճառ՞ողը, նրա հաճախո՞րդը, թե՞ միջնորդը և այլն:

Հատուկ նշվեց, որ ՀՀ կառավարությունը շատ է հենվում ՀԿ-ների վրա, որոնք մեծ գործ են անում կոնվենցիայի իրականացման ուղղությամբ: Անշուշտ, լավ է, որ ձևավորվել է սոցիալական գործընկերություն, բայց ամեն դեպքում կառավարությունը պետք է հիշի, որ կոնվենցիայի իրականացման պատասխանատվությունն ինքն է կրում:

Կոմիտեի անդամները մեկ անգամ ևս ընդգծեցին, որ գենդերայնորեն չեզոք օրենսդրությունը չի բացառում գործնականում

րումները չափազանց շատ էին, և առաջիկա տարիներին կոմիտեի հանձնարարականները Յայաստանի երրորդ և չորրորդ զեկույցների կապակցությամբ պետք է կանանց հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում լինեն: Ուստի ցանկություն ունեի, որ ՀԿ-ների մեր գործընկերները, որոնք իրենց աջակցությունը բերեցին Ասոցիացիայի այլընտրանքային զեկույցի պատրաստմանը, տեղյակ լինեին քննարկման ընթացակարգին և բարձրացված հարցերին, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ շարունակելու կանանց հուզող բազմաթիվ հիմնախնդիրների իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքը:

Լիլիթ Չաքարյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախագահ, պատմական գիտությունների թեկնածու



«Միասնական, լավ համակարգված քաղաքականության մասին խոսելը, թերևս, վաղաժամ է»



Չարցագրույց Կանանց նկատմամբ խտրականության վերացման (CEDAW) կոմիտեի 43-րդ նստաշրջանի մասնակից, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գեներալին հետազոտությունների կենտրոնի փորձագետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վլադիմիր Օսիպովի հետ

- Դուք մասնակցել եք CEDAW կոմիտեի 43-րդ նստաշրջանին, որտեղ քննարկվել են 2002-2007 թթ. ընթացքում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցները: Ի՞նչ տպավորություն ստացաք և ինչպե՞ս եք գնահատում այն գործընթացը, որի մասնակիցն եք եղել:

- Դա շատ ընդհանուր հարց է, ուստի դժվար է միանշանակ պատասխան տալ: Թերևս պետք է խոսել ավելի որոշակի հարցերի շուրջ: Ընդհանուր առմամբ, դա, իհարկե, շատ հետաքրքիր փորձ էր, որն օգտակար է բոլորիս: Չնայած մենք բազմիցս ծանոթացել ենք կոմիտեի նյութերին, պատկերացում ունեինք նստաշրջանների կառուցվածքի և ձևաչափի մասին, այդուհանդերձ, այդ ամենն իմանալը և նիստին ներկա գտնվելն ու դրա անմիջական մասնակիցը լինելը միանգամայն տարբեր բաներ են:

Կարծում եմ՝ դա բոլորիս համար էլ օգտակար էր այն առումով, որ եթե հետագայում, ասենք, ինքներս աշխատենք կամ խորհրդատվություն տանք այլ հասարակական կազմակերպությունների, ավելի հստակ կպատկերացնենք նիստերի ձևաչափը, մոտեցումները, գերակայությունները և այն հարցերը, որոնց սովորաբար ուշադրություն են դարձնում կոմիտեի անդամները:

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին մվիրված նստաշրջանին, ապա ընդհանուր առմամբ մեր՝ որպես հասարակական կազմակերպության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դերը, իհարկե, ավելի նշանակալի էր CEDAW կոմիտեի հունվարի 19-ին կայացած թիվ 867 նիստի ժամանակ: Հատկացվել էր ավելի քան երեք ժամ հատկապես հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպելու համար: Եվ կարծում եմ՝ ինչպես այդ նիստի, այնպես էլ հունվարի 22-ին ճաշ-ճեպագրույցի ընթացքում տրված հարցերը վկայում են, որ CEDAW կոմիտեի անդամները շատ ուշադիր էին ուսումնասիրել այլընտրանքային զեկույցը, որը մշակել էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան: Ընդհանուր առմամբ,

կարծում եմ, զեկույցը բավական օգտակար է եղել նրանց համար:

- Ձեր տեսանկյունից՝ կոնվենցիայի կատարման ո՞ր ոլորտներին էին վերաբերում ամենասուր հարցերը: Ելնելով Ասոցիացիայի ներկայացրած այլընտրանքային զեկույցից՝ կոմիտեի անդամները հատկապես ինչի՞ վրա էին սևեռել ուշադրությունը:

- Հավանաբար գործընկերներս կհամաձայնեն, որ զուտ կառուցվածքային առումով մենք ճիշտ էինք պատրաստել այլընտրանքային զեկույցը և առանձնացրել ամենահիմնական, առավել ցավոտ հարցերը: Դա հաստատեցին հենց կոմիտեի եզրափակիչ դիտողությունները և հանձնարարականները: Եվ դա վերաբերում է ոչ միայն երկու կառուցվածքաստեղծ հիմնախնդիրներին, որոնց մասին շատ է խոսվում զեկույցում. առաջինը Հայաստանում կանանց քաղաքական ներկայացվածության և քաղաքական մասնակցության խնդիրն է, և երկրորդը՝ կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմի խնդիրը: Արժարժեցին նաև բռնության, տնտեսության, առողջապահության և կրթության ոլորտներում խտրականության հետ կապված հարցեր:



Չարկ է նշել, որ կոմիտեի անդամները ուշադիր էին մեր բարձրացրած հարցերի նկատմամբ ոչ միայն այդ նիստի ժամանակ, այլև թիվ 870 նիստի ընթացքում, երբ քննարկվում էին Հայաստանի կառավարության 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցները: Այդ նիստերի ընթացքում փորձագետների տված հարցերից և նրանց մեկնաբանություններից պարզ դարձավ, որ նրանք տարբեր աղբյուրներից են օգտվել: Դրանց թվում ոչ միայն կառավարության զեկույցն էր և դրա առնչությամբ կոմիտեի փորձագետների ներկայացրած հարցերի լրացուցիչ ցանկը, որոնց կապակցությամբ այնուհետև Հայաստանի կառավարությունն իր պարզաբանումներն ու պատասխաններն է տվել: Փորձագետները ծանոթացել էին նաև Ասոցիացիայի այլընտրանքային զեկույցին, ինչպես նաև ՄԱԿ-ի կառույցների ներկայացրած զեկույցին: Եվ դարձյալ կոմիտեի անդամների տված հարցերն ու մեկնաբանությունները վկայում էին, որ նրանք շատ բան են քաղել մեր այլընտրանքային զեկույցից: Կրկնեն, որ հարցերը կապված էին և՛ ազգային մեխանիզմի, և՛ կառավարման կառույցներում կանանց ներկայացվածության, և՛ կանանց քաղաքական մասնակցության խնդիրների հետ:

Եղան նաև հարցեր, որոնք նվազ չափով էին լուսաբանվել մեր զեկույցում: Կոմիտեի անդամները շեշտում էին նաև կանանց թրաֆիքինգի և սեռական շահագործման խնդիրները: Հայաստանի կառավարությունը շատ խիստ քննադատության ենթարկվեց իր զեկույցում կանանց նկատմամբ բռնության

խնդիրը բոլորովին անտեսելու համար:

- Դուք քաջատեղյակ եք Հայաստանի ոչ միայն 3-րդ և 4-րդ, այլև 1-ին և 2-րդ պարբերական զեկույցների առնչությամբ տրված հանձնարարականներին: Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն է շարժընթացը, որքանո՞վ են 1997 և 2002 թվականների զեկույցները և ներկայիս զեկույցը ցույց տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը, նրա կառավարությունը հաշվի են առնում դրանք և որոշակի քայլեր ձեռնարկում: Արդյոք որևէ դրական տեղաշարժ նկատվո՞ւմ է:

- Որոշակի դրական տեղաշարժեր իհարկե կան, բայց միասնական, լավ համակարգված քաղաքականության մասին խոսելը, թերևս, վաղաժամ է: Դրա համար պարզապես հիմքեր չկան: Եթե անդրադառնանք 1997 թվականին քննարկված առաջին զեկույցի, երկրորդ զեկույցի (2002 թվականին) և արդեն այժմ՝ 2009 թվականին, 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների առնչությամբ արված դիտողություններին և հանձնարարականներին, ապա կտեսնենք, որ շատ հիմնախնդիրներ գործնականում կրկնվում են: Այսպես, վերջին զեկույցի առնչությամբ կոմիտեն իր հանձնարարականներում նշում է. CEDAW կոմիտեն «դարձյալ» կամ «կրկին», կամ «հերթական անգամ» իր մտահոգությունն է արտահայտում որոշակի հիմնախնդիրների կապակցությամբ, ինչպիսիք են կոմիտեի հանձնարարականների մասին հասարակայնության լայն իրա-

զեկման անհրաժեշտությունը, օրենսդիր և գործադիր իշխանության կառույցներում քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության բարձրացումը:

Եվ, իհարկե, պատահական չէ, որ նիստի ընթացքում բազմիցս բարձրացվել է ազգային մեխանիզմի հարցը: Եթե Հայաստանում լինե՞ր այդպիսի մեխանիզմ, այսինքն՝ այնպիսի ստորաբաժանում կառավարությունում, որը զբաղվեր ոչ միայն կառավարության քաղաքականության բոլոր բնագավառներում գեներային բաղադրիչի ներդրմամբ, այլև համադասեր և իրականացներ միասնական քաղաքականությունը, ապա բոլոր ինստիտուցիոնալ կառույցները կհենվեին արդեն կատարված աշխատանքի և այն հանձնարարականների վրա, որոնք տրվել են: Անձամբ ես այնպիսի տպավորություն ունեմ, որ թեև այսօրվա դրությամբ հանրապետությունում ձեռնարկվում են որոշ միջոցներ և ինչ-ինչ անջատ գործողություններ՝ ուղղված միջազգային կառույցների, հատկապես՝ ՄԱԿ-ի հանձնարարականների կատարմանը, որոնք կոչ են անում մեր կառավարությանը շարժվել գեներային հավասարության նվաճման ուղղությամբ, այսուհանդերձ, ազգային մեխանիզմի բացակայության պատճառով միասնական, համակարգված, շարունակական քաղաքականություն հանրապետությունում չի իրականացվում:

- Փաստորեն չորս զեկույցների առնչությամբ պարբերա-



բար հնչող առանցքային դիտողություններից և հանձնարարականներից մեկը վերաբերում է հատկապես ազգային մեխանիզմին: Եթե Ձեզ հանձնարարական տալու հնարավորություն ընձեռվեր, ի՞նչ առաջարկություն կանեիք, ինչպե՞ս և որտե՞ղ պետք է ստեղծվի ազգային մեխանիզմը և ի՞նչ իրավասություն ու պատասխանատվություն պետք է ունենա:

- Իրոք, թե՛ մեր այլընտրանքային զեկույցում և թե՛ կոմիտեի հանձնարարականներում և եզրափակիչ դիտողություններում ինչպես առաջին, այնպես էլ երրորդ և չորրորդ զեկույցների առնչությամբ հստակ հարց է դրված այդպիսի կառույցի ստեղծման անհրաժեշտության մասին: Իհարկե, կարելի է շատ երկար խոսել այդ հարցի



շուրջ: Եվ մեր զեկույցում տրված են մի շարք առաջարկություններ. ստեղծել համապատասխան կառույցներ, ասենք, Ազգային ժողովի շրջանակներում, հանրապետության նախագահին կից ստեղծել հասարակական-պետական խորհուրդ և այլն: Բայց դրանք ինստիտուցիոնալ մեխանիզմներ են, որոնցից յուրաքանչյուրն օժտված է որոշակի գործառույթներով: Դրանք կարող են շատ արդյունավետ գործել, բայց, իհարկե, անհրաժեշտ է որևէ համակարգող կառույց: Իդեալական տարբերակը ես համարում եմ, որպես այդպիսին, գեներային հավասարության նախարարությունը: Սա-

կայն հասկանում եմ, որ նախարարության տեսքով առանձին կառույցի ստեղծման համար անհրաժեշտ են ֆինանսավորում և օրենսդրության փոփոխություն: Անշուշտ, դա կարող է լինել շատ փոքր նախարարություն: Բայց եթե մի շարք պատճառներով դա հնարավոր չէ իրականացնել, համենայն դեպս ներկայումս և մոտ ապագայում, ապա կարելի է կառույց ստեղծել վարչապետին կամ որևէ առաջատար նախարարության

նր, օրինակ՝ տարածքային կառավարման նախարարությանը կից: Ինչո՞ւ: Որովիետև տվյալ նախարարությունը շատ լավ կապված է տարածաշրջանների, մարզպետարանների և համայնքների հետ: Հատկապես այդ նախարարությունը կարող է առավելագույնս համակարգել երկրում թե՛ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և Պեկինի գործողությունների ծրագրի, թե՛ Ազգային ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լայն շրջանակը:

Կարծում եմ՝ այդպիսի կառույցներն ամեն կերպ աշխատանքի և սոցիալական հարցե-

րի նախարարության կազմում ներկայացնելու փորձերը անարդյունավետ են: Այսինքն՝ դրանք ոչ միայն չեն լուծում դրված խնդիրները, այլև խանգարում են հիմնախնդրի ճիշտ իմաստավորմանը: Չէ՞ որ գործնականում խնդրի ճիշտ ձևակերպումը գտած պատասխանի կեսն է: Եվ հարցն այստեղ այն է, որ, նախ, ինչպես իրավացիորեն մշտնապես իմ շատ գործընկերներ, կանայք սոցիալական հաշմանդամներ չեն, ուստի սխալ է միավորել նրանց, այսպես կոչված, «խոցելի», այսինքն՝ սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անապահով սոցիալական խմբերի հետ: Երկրորդ՝ այսօր Հայաստանում գեներային հավասարության հասնելու առումով լուծման կարոտ հիմնախնդիրների շրջանակը չի սահմանափակվում բացառապես սոցիալական խնդիրներով: Թեպետ, անշուշտ, սոցիալական ոլորտում հիմնախնդիրները քիչ չեն, խնդիրներ կան նաև աշխատանքի և զբաղվածության ոլորտում: Այդուհանդերձ հիմնական խնդիրները, մեր կարծիքով, քաղաքական ոլորտում են. խոսքը “empowerment”-ի մասին է, այսինքն՝ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման, նրանց զորացնելու մասին, ներառյալ ավելի լայն ներկայացվածությունը ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական որոշումների կայացման մակարդակում: Իսկ այս խնդիրները աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-



րարությունը, այդ գերատեսչության և այնտեղ աշխատող գործընկերների հանդեպ ունեցած իմ մեծ հարգանքով հանդերձ, չի կարող լուծել, քանի որ ուրիշ խնդիրներ, ուրիշ գործառույթներ, ուրիշ մանդատ ունի:

- Ի՞նչ եք կարծում, մեր այլընտրանքային զեկույցը, մասնակցությունը կոմիտեի աշխատանքներին, մեր ձևավորված տեսլականը հիմքեր տալի՞ս են խոսելու այն մասին, որ հասարակական, այդ թվում նաև կանանց կազմակերպությունները պետք է օգտագործեն այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են միջազգային փաստաթղթերը և դրանց կատարման լոբբինգն այն մակարդակով, որը մեզ հաջողվեց:

- Անկասկած: Ավելին, գուցե անհամեստ հնչի, քանի որ ինքս էլ հեղինակային խմբի անդամ եմ, բայց չեմ կարող չնշել, որ, ասենք, CEDAW կոմիտեի հատուկ զեկուցողը այդ նստաշրջանում՝ տիկին Վիոլետա Նոյբաուերը, որը հատուկ զբաղվել է Հայաստանի հարցերով, ընդգծել է (մեջբերում եմ բառացի) «այլընտրանքային զեկույցի բացառիկ բարձր, նույնիսկ հոյակապ որակը»: Իսկ կոմիտեի անդամ տիկին Ռութ Գալպերին-Գատարին հայտարարեց (կրկին բառացի եմ մեջբերում), որ «սա երբևէ իմ տեսած այլընտրանքային զեկույցներից լավագույնն է»: Դա շատ բարձր գնահատական է և ասվել է, իհարկե, ոչ գեղեցիկ խոսքի համար: Պարզապես դա վկայում է, որ Ասոցիացիան ընտրել է ճիշտ ռազմավարություն՝ ոչ միայն օգտագործելով իր ունեցած

փորձագիտական ներուժը, այլև շատ մտածված մոտեցալով զեկույցի կազմմանը ինչպես կառուցվածքի, այնպես էլ հիմնախնդիրների ընտրության և բովանդակության առումով: Եվ կոմիտեի անդամների արտահայտած մեկնաբանություններում նույնպես, որպես նվաճում կամ շատ դրական երևույթ, հստակ արձանագրվել է, որ այլընտրանքային զեկույցում կար այն, ինչը բացակայում էր կառավարության զեկույցում: Մեր զեկույցում խոսքը վերաբերում էր այսպես կոչված բովանդակային՝ սուբստանտիվ հավասարությանը: Դա շատ առաջադեմ հասկացություն է, որը բովանդակում է ոչ միայն ձևական՝ դե յուրե հավասարությունը և ոչ միայն դե ֆակտո հավասարությունն ու հնարավորությունների հավասարությունը: Դա նշանակում է նաև այնպիսի միջոցների ձեռնարկում, որոնք ապահովում են փաստացի հավասարությունն՝ ըստ արդյունքի: Սա շատ կարևոր տեսակետ է, որն արտացոլված է այլընտրանքային զեկույցի գաղափարախոսության և փիլիսոփայության մեջ: Կարծում եմ, որ նման մոտեցումները, սկզբունքները և մեթոդաբանական ցուցումները պետք է կիրառվեն այդպիսի զեկույցներ կազմելիս, բնականաբար, հաշվի առնելով տվյալ ոլորտում գոյություն ունեցող և, որպես կանոն, Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված, ստորագրած կամ վավերացրած միջազգային փաստաթղթերի ամբողջականությունը (և դա արվել է այլընտրանքային զեկույցում): Հայաստանը այդ կառույցների անդամ է, ուստի նման փաստաթղթերը,

թեև կարող են ձևական, իրավաբանական առումով խորիրոգատվական բնույթ կրել, սկզբունքորեն պարտադիր են անդամ երկրների համար:

- Դուք «Տղամարդկանց և կանանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» օրենքը մշակող խմբի անդամ եք: Ի՞նչ եք կարծում՝ այդպիսի օրենքի ընդունումը հասարակության մեջ կստեղծի՞ համապատասխան վերաբերմունք կամ կփոխի՞ եղած վերաբերմունքը այն խնդրի առնչությամբ, որ պետք է լիովին օգտագործել կանանց մտավոր ներուժը և ստեղծել այդպիսի հավասարության հնարավորություն երկրի ավելի դինամիկ զարգացման համար:

- Ես համարում եմ, որ օրենքի նախագիծը այն երջանիկ դեպքն է, երբ պետական և ոչ պետական կառույցների արդյունավետ համագործակցությունը դրսևորվեց լավագույնս և առավել արդյունավետ: Եվ կարծում եմ՝ ոչ միայն այն պատճառով, որ խմբի փորձագիտական ներուժը և տարբեր կառույցների ու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնագիտական արհեստավարժությունը շատ բարձր էին: Դա հնարավոր եղավ նաև այդ հիմնախնդրի նշանակալիության ընդհանուր ըմբռնման շնորհիվ, խմբի ջանքերի շնորհիվ՝ ուղղված, մի կողմից, օրենքը առավելագույնս իրատեսական դարձնելուն, այսինքն՝ մեր այսօրվա պայմաններին ու կարիքներին համապատասխանեցնելուն, իսկ մյուս կողմից՝



ներկայիս իրականությունից մեկ քայլ առաջ անցնելուն, որպեսզի հնարավոր լինի ապահովել նաև դրական շարժընթաց, որպեսզի օրենքը «պտուղներ» տա: Ավելի քան համոզված եմ, որ տվյալ օրենքի ընդունումը՝ հատկապես այդ ձևով, և համապատասխան կառույցների կողմից դրա ակտիվ օգտագործումը կհանգեցնեն Հայաստանում գենդերային խնդիրների հետ կապված իրավիճակի զգալի բարելավման: Ուզում եմ ուշադրություն հրավիրել նաև այն փաստի վրա, որ անցյալ տարվա դեկտեմբերին ես առիթ ունեցա հանդես գալու ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի Ստամբուլում կազմակերպած մեծ միջազգային գիտաժողովում: Այն նվիրված էր նաև գենդերային հավասարությանն ուղղված օրենքների մշակմանը և ներդրմանը: Ուզում եմ նշել, որ հայաստանյան օրենքի նախագիծը մեծ հետաքրքրություն առաջացրեց մասնակիցների շրջանում, որոնք տվյալ ոլորտի փորձագետներ էին: Ծանոթանալով նախագծին՝ նրանք շատ բարձր

և դրական գնահատեցին այն: Տեսան, որ կատարվել է մեծ աշխատանք միջազգային փորձի հիման վրա: Մենք ուսումնասիրել ենք տարբեր երկրների ավելի քան 30 օրենք և քննարկել, թե ինչ չափով են նրանց հիմնախնդիրները հարաբերակցվում մեր խնդիրների հետ, ինչու որոշ լուծումներ անարդյունավետ եղան կամ չգործեցին, իսկ մյուսները, հակառակը, արդյունավետ գտնվեցին:

Ելնելով վերը ասվածից, եզրափակելով խոսքս՝ ուզում եմ ասել, որ, ըստ իս, չպետք է ձգձգել այս օրենքի ընդունումը: Սա՝ նախևառաջ: Երկրորդ՝ այդ օրենքը իրավական հիմքեր է ստեղծում մշակելու ենթաօրենսդրական ակտեր, որոնք պետք է ավելի որոշակի դարձնեն այն և լրացնեն առանձին ոլորտների կամ հիմնախնդիրների առնչությամբ որոշումների կայացման առումով: Եվ, վերջապես, այդ օրենքը ոչ միայն իրավական հիմքեր է ստեղծում, այլև որոշակի մեխանիզմ է, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ անցկացնելու

հասարակության իրազեկման արշավները: Նաև կստիպի այն կառույցներին և անձանց, որոնք առայժմ վերջնականապես չեն կողմնորոշվել, ավելի լուրջ վերաբերվել գենդերային հիմնախնդիրներին, ավելի խոր ընկալել դրանք և, վերջապես, հասկանալ, որ գենդերային հավասարության նվաճումը ոչ թե բարեհոգի ցանկություն է, այլ այսօրվա պահանջ և, բացի այդ, իրենց ֆունկցիոնալ պարտականությունների շրջանակի մեջ է մտնում:

- Շնորհակալություն: Ես նույնպես կարծում եմ, որ այդ օրենքի ընդունումը համահունչ է այն հանձնարարականներին, որոնք ներկայացվել են ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի կողմից Հայաստանի զեկույցի քննարկման արդյունքում:

**Ջրույցը վարեց
Իրինա Շահինյանը**

Մասնակից պեյրությունները դադարապարտում են կանանց նկատմամբ խտրականությունն իր բոլոր չեղերով, համաչայնում են բոլոր համապատասխան միջոցներով և առանց հապաղելու վարել կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն և այդ նպատակով պարտավորվում են.

ա) տրամադրված և կանանց իրավահավասարության սկզբունքն ամրագրել իրենց ազգային սահմանադրություններում կամ համապատասխան օրենսդրության մեջ, եթե այն դեռևս ամրագրված չէ, և օրենսդրության ու այլ համապատասխան միջոցների օգնությամբ ապահովել այդ սկզբունքի գործնական իրականացումը,

բ) ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պարտավորումներ, որպեսզի դրանք անհրաժեշտ են,

գ) չեղարկել բոլոր համապատասխան, ներառյալ օրենսդրական միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ...

Հոդված 2, ԿՈՆՎԵՆՅՈՒ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՐՈՇՎԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ



Երեսուն տարի՝ ընդդեմ կարծրատիպերի և խտրականության



Այս տարվա դեկտեմբերին լրանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի ընդունման երեսուն տարին: Դրա որոշ դրույթներ և, առաջին հերթին, սեռի հատկանիշով խտրականության բացառման սկզբունքը ներառվել են աշխարհի շատ երկրների սահմանադրություններում, իսկ կամընտիր արձանագրությունը կանանց համար նոր հնարավորություններ է ստեղծում ազգային բոլոր միջոցները սպառելուց հետո անձնապես կամ կազմակերպությունների միջոցով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե բողոքներ ներկայացնելու կոնվենցիայով պաշտպանված իրավունքների խախտման մասին: Ինչպես հայտնի է, Հայաստանը վավերացրել է կոնվենցիան 1993 թվականի հունիսին, իսկ կամընտիր արձանագրությունը՝ բոլորովին վերջերս՝ 2006 թվականի մայիսին:

Իր ընդունման պահից երե-

սուն տարի անց Կոնվենցիան մյուս միջազգային փաստաթղթերի շարքում ամենաշատ երկրների կողմից վավերացված փաստաթուղթն է, սակայն միջազգային հանրությունը նախկինի պես մտահոգված է այն իրողությամբ, որ կանանց նկատմամբ զգալի խտրականություն գոյություն ունի: Իհարկե, առաջընթացի լրիվ բացակայության մասին խոսելն անարդարացի կլիներ, նախևառաջ՝ կոնվենցիայի նկատմամբ, քանի որ այն ըստ էության անթերի փաստաթուղթ է և լիակատար հնարավորություններ է ընձեռում դրան միացած պետություններին կանանց նկատմամբ խտրական գործելակերպը հաղթահարելու համար: Բավական է հիշատակել կոնվենցիայի դրույթների կատարման մասին պետությունների պարտադիր պարբերական հաշվետվողականության մեխանիզմը, որը հնարավորություն է տալիս հետևելու դրա իրականացմանը մշտադիտարկման կարգով:

Այն իրողության մեջ, որ աշխարհը դեպի լավն է փոխվում, անշուշտ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան ներդրում ունի: Այլ հարց է, որ այդ փոփոխությունները չափազանց դանդաղ են տեղի ունենում: Ի դեպ, կոնվենցիան պատասխանում է նաև այդ հարցին: Բավական է ուշադիր ընթերցել դրա դրույթները, որոնք, իմիջիայլոց, ժամանակին առաջին անգամ են բարձրաձայնվել: Խոսքը վերաբերում է խտրականություն հասկացության հստակ սահմանմանը,

ժամանակավոր հատուկ միջոցներին՝ քվոտաներին, որոնք անհրաժեշտ է կիրառել այս կամ այն ոլորտում սեռերի ներկայացվածության անհավասարակշռությունը շտկելու համար: Եվ, վերջապես, 5-րդ հոդվածին, որը նշում է, թե որտեղ են կանանց խտրականության արմատները և ինչպես պետք է պայքարել դրանց դեմ: Մասնավորապես, պետություններին հանձնարարվել է ձեռնարկել միջոցառումներ՝ «փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարմունքների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի ստորադասության կամ առավելության, կամ տղամարդկանց ու կանանց կարծրատիպային դերի գաղափարի վրա»: Նույն հոդվածի երկրորդ մասը վերաբերում է այդ կարծրատիպերի առաջացման աղբյուրին՝ ընտանեկան դաստիարակությանը: Շեշտվում է մայրության՝ որպես սոցիալական գործառույթի պատշաճ գիտակցումը և միաժամանակ սեփական երեխաների դաստիարակության ու զարգացման գործում տղամարդկանց և կանանց ընդհանուր պատասխանատվության ճանաչումը:

Ըստ էության, կոնվենցիան առաջարկում է չսահմանափակվել միայն իրավունքի հարցերով, այլ մտածել և ձեռնարկել համապատասխան միջոցներ գիտակցության ավելի խորքային մակարդակների բարեփոխման համար, այն է՝



տղամարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխումը: Չէ՞ որ կարելի է ընդունել բազմաթիվ լավ և արդարացի օրենքներ, որոնք կոչ են անում ապահովել տղամարդկանց և կանանց հավասարություն, բայց դրանցից ոչ մեկը չի գործի, քանի դեռ հասարակությունում պահպանվում են կնոջ դերի և տղի մասին կարծրատիպային պատկերացումները, որոնք սահմանափակում են նրա լիարժեք մասնակցությունը քաղաքական, տնտեսական, սոցիալական կյանքում:

Այս առումով անդրադառնանք գլխավոր հիմնախնդրին, որն այսօր խոչընդոտում է Հայաստանում կոնվենցիայի

ծառուների ու աշխատողների կարծիքների միջև: Վերջինները չեն տեսնում կամ չեն նկատում խտրականության դրսևորումները և՞ կարելի է ենթադրել, որ չեն էլ կռահում, թե որ դեպքերում է տեղի ունենում խտրականություն: Պատկերը փոխվում է, երբ հետազոտողները հարցն այլ կերպ են ձևակերպում. արդյոք կանայք և տղամարդիկ հավասար հնարավորություններ ունեն ծառայողական առաջխաղացման կամ սահմանադրական իրավունքների իրականացման համար: Այս հարցերի պատասխաններում հավասար հնարավորությունների առկայությունը ճանաչողների թիվը նվազում է մինչև 30-34%: Բայց հարցված-

առաջացնում այն հանգամանքը, որ տվյալ կարծրատիպին հակված հարցվածների 40 տոկոսը կանայք են:

«Կանայք իրենք են խտրականության ենթարկում կանանց: Իրենց անվստահությամբ են խտրականության ենթարկում: Այդ անվստահության վրա է հիմնվում քաղաքականության և իշխանության մեջ տղամարդկանց գերիշխանությունը: Մտածե՛ք՝ ո՞վ է նրանց դեպի վեր անցաթուղթ տալիս: Կանայք, որոնք չեն վստահում կանանց», - համարում է Հանրային խորհրդի գեներալային քաղաքականության և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահ Ելենա Վարդանյանը:

Մասնակից պեպուրյունները չեռնարկում են բոլոր համապատասխան միջոցառումները.

ա) փոխելու տղամարդկանց ու կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելները՝ նախապաշարձումների ու սովորույթների և բոլոր այլ պրակտիկաների վերացմանը հասնելու նպատակով, որոնք հիմնված են այս կամ այն սեռի պտորադասության կամ առավելության կամ տղամարդկանց ու կանանց սպերեոփիային դերի գաղափարի վրա...

Հոդված 5, ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՍՄ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒՈՐ ՉԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

դրույթների կիրառումը: Դա այն է, որ հասարակությունը չի գիտակցում խտրականությունը կանանց նկատմամբ: Չեն գիտակցում և իրենք՝ կանայք: Այդ են վկայում վերջին տարիներին Հայաստանում անցկացված գրեթե բոլոր սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների արդյունքները: Դրանք բացահայտում են խտրականության գիտակցման ցածր մակարդակը:

Այսպես, աշխատատեղում խտրականության և բռնության դրսևորումների հետազոտումը բացահայտել է բացարձակ անհամապատասխանություն այդ մասին փորձագետների և գոր-

ների մեկ երրորդը այնքան էլ փոքր թիվ չէ: Ինչպես պնդում են սոցիոլոգները, դա այն կրիտիկական զանգվածն է, որը կարող է դառնալ ազդեցության ռեֆերենտ խումբ, որի միջոցով ձևավորվում են իդեալները, հայացքները, դիրքորոշումները, արժեքները, վարքագծի մոդելները:

Հարցվածների 43%-ն արտահայտում է իր բացարձակ համաձայնությունը «Քաղաքականությունը կնոջ գործ չէ» կարծրատիպին, իսկ սա արդեն ավելի լուրջ է, սա հայ հասարակությունում այդ կարծրատիպի ամրության վկայությունն է: Ընդ որում, մտահոգություն է

Չնայած հայ հասարակության մեջ գեներալային կարծրատիպերի տարածվածությանը և սեքսիզմի դրսևորումներին, ավելորդ է խոսել պետության կողմից դրանք հաղթահարելու ուղղությամբ կառուցողական քայլերի ձեռնարկման մասին: Բավական է նկատել, որ կոնվենցիային միանալուց հետո անցած 16 տարիների ընթացքում Հայաստանում այդ փաստաթղթի գոյության մասին իրազեկված քաղաքացիների թիվը չափազանց փոքր է, իսկ դատական պրակտիկայում չի գրանցվել դրա վկայակոչման ոչ մի նախադեպ: Եվ դա այն պարագայում, երբ այդ փաս-



տաթղթի մասին լայն իրազեկումը և դրա ապահովման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը կոնվենցիային միացած պետությունների գլխավոր պարտավորություններից են:

Այս առումով զարմանալի չէ, որ միակ հաղորդագրությունը, որը հայտնվեց հայկական ՁԼՄ-ներում ժնկից Հայաստանի կառավարության պատվիրակության վերադարձից հետո, որտեղ այս տարվա հունվարին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն քննարկել է երկրում կոնվենցիայի իրականացման մասին երրորդ և չորրորդ միացյալ պարբերական զեկույցը, վերնագրված էր՝ «Հայաստանում կանանց նկատմամբ խտրականություն չկա»: Հաղորդագրությունում մեջբերված էին ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանի խոսքերը, որը պատմելով ժնկ կատարած

ուղևորության արդյունքների մասին, հայտարարել է. «Հայաստանում չկան օրենքներ, քաղաքականություն կամ որևէ գործելակերպ, որոնց համաձայն՝ կանանց նկատմամբ խտրականություն է իրականացվում»: Կարծում ենք՝ մեկնաբանություններն ավելորդ են: Սակայն կարելի է ծանոթանալ զեկույցի քննարկման արդյունքների հիման վրա փորձագետների մշակած հանձնարարականներին և պարզել, որ Հայաստանում կանանց նկատմամբ խտրականություն, ցավոք, գոյություն ունի: Պարզապես պետք է սովորել այն տեսնել:

Թամարա Հովնաթանյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության անդամ, «Գենդեր-պրոմեդիա» ՀԿ նախագահ

Գենդերային հավասարակշռության ապահովումը նշանակում է քաղաքական խաղի կանոնների փոփոխություն



Հայաստանի քաղաքական իրականության մեջ համերաշխություն չկա, և դա բուժման գի մման անդրադառնում է քաղաքական հիմնախնդիրների վրա:

Ասվածը վերաբերում է նաև գենդերային հիմնախնդիրներին: Առաջին հայացքից թվում

է, թե ակնհայտ է, որ Հայաստանը անդամակցում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային և հետևում է, որ երկիրը հստակ քաղաքական քայլեր ձեռնարկի ստանձնած պարտավորությունները իրականացնելու համար: Բայց իրականում, գոնե 2004 թվականից սկսած, ամբողջ գործընթացից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ընդամենը աշակերտների նման պատճառաբանություններ են բերվում, թե ինչու «չեն սովորել դասը»: Քաղաքական կամքն իսպառ բացակայում է:

Բոլոր շփումները կառավարման բոլոր մակարդակներում ստիպում են կասկածի տակ դնել իշխանությունների՝ գենդերային անհավասարակշռու-

թյունը հաղթահարելու անհրաժեշտության գիտակցումը: Կարծես իմիջիայլոց մի բան է, ձեռքի հետ կարվի, ինչ կստացվի՝ կստացվի:

Վերաբերմունքը գենդերային հիմնախնդիրներին նույնն է, ինչ ժողովրդավարությանն ու ժողովրդավարական արժեքներին: Ինչպես որ առանց ջանք թափելու ժողովրդավարության առաջընթաց չի լինելու, այնպես էլ առանց ջանք թափելու գենդերային հավասարակշռություն չի ապահովվելու: Կառավարության կառույցների վերաբերմունքը գենդերային հիմնախնդիրներին ավելի քան ֆորմալ է: Շատ ավելի լուրջ է և պատասխանատու ՀԿ սեկտորի վերաբերմունքը:

Սա նշանակում է, որ իշխանությունները ժողովրդավարա-



կան արժեքների հարգումը և գենդերային հիմնախնդիրների լուծումը մեծ մասամբ ընկալում են որպես իշխանության վայելումը խանգարող հանգամանք:

պակցությամբ, ընդամենը շղարշ են ցանկության բացակայությունը ծածկելու համար: Բոլոր շփումները հասարակության տարբեր շերտերի հետ հակառակի մասին են վկայում:

ների շրջանակներում ցույց են տալիս, որ հասարակությունը հիմնականում տեղեկացված չէ առկա գործընթացների մասին, նրանց համար մի հեռավոր, վերացական բան է միջազգային կառույցներին ինտեգրվելը, միջազգային օրենքների կիրառումը: Մեր բոլոր հանդիպումներն են վկայում, որ հասարակությունը լույսի նման է ընդունում այս նորությունները, որ մարդիկ պատրաստակամ են այս բոլորը կիրառել կյանքում:

Հենց սա է պատճառը, որ տարբեր կարգի պաշտոնյաներ առանձնապես ոգևորված չեն սեմինարներով ու տեղեկատվական հանդիպումներով և ներքին կարգով փորձում են հնարավորինս խոչընդոտել նման միջոցառումները:

Հակառակ դեպքում, ի թիվս այլոց, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվեցիան կդառնար լավագույն գործիքը ՀՀ-ում կանանց հիմնախնդիրները իրավական մակարդակում լուծելու համար:

Անահիտ Աղոյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Կոտայքի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող

Մասնակից պեդուքությունները չեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական ու հասարակական կյանքում և, մասնավորապես, կանանց համար, տղամարդկանց հետ հավասար պայմաններով...

Հոդված 7, ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՉԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Պարզ դիտարկումներն էլ ցույց են տալիս, որ գենդերային հավասարակշռության ապահովումը նշանակում է քաղաքական խաղի կանոնների փոփոխություն, հետևաբար՝ իշխանության կորուստ: Այլապես այդ լուծումների իմիտացիան կմատուցեին իրենց «հավատարիմ» կանանց միջոցով: Ուրեմն բոլոր դեպքերում կանանց մասնակցությունը դիտարկվում է վտանգավոր:

Եվ այն բոլոր պատճառաբանությունները, որ բերվում են մեր քաղաքական մշակույթում կանանց մասնակցության բացակայության, կանանց մրցակցության բացակայության կա-

Մեր հասարակությունը հանդուրժող է կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ, ավելին՝ կա հասարակական պահանջ:

Հետևելով ՁԼՄ-ներին, լսելով նրանց մեկնաբանությունները գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ, շփվելով և երկխոսության ու բանավեճի մեջ մտնելով տարբեր քաղաքական պաշտոնյաների հետ՝ տեսնում ենք, որ ոչ ոք հիմնախնդրին չի տիրապետում, չի էլ ցանկանում տիրապետել և լուրջ չի վերաբերվում:

Իսկ հանդիպումները քաղաքներում և գյուղերում կրթական ծրագրերի ու քննարկում-

1. Մասնակից պեդուքությունների կողմից տղամարդկանց և կանանց միջև փաստական հավասարության հաստատումն արագացնելուն նպատակաուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը չի համարվում խտրականություն, ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայով, սակայն դա ոչ մի դեպքում չպետք է հանգեցնի անհավասար կամ տարբերակված ստանդարտների պահպանման. այդ միջոցները կվերացվեն, երբ հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության նպատակներն իրականություն կդառնան:

Հոդված 4, կեր 1, ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՉԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ



Ինչո՞ւ մեր երկրում քչերը գիտեն այս փաստաթղթի մասին



Հայաստանի Հանրապետությունում հասարակայնության լայն շերտերը չեն ընդունում կանանց նկատմամբ խտրականության առկայությունը՝ չնայած այն փաստին, որ մեր երկիրը որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության աստիճանով զգալիորեն հետ է մնում համաշխարհային ցուցանիշներից:

Գենդերային խտրականությունը չգիտակցելու հիմնախնդիրն իրավական մշակույթի ոչ բավարար մակարդակի հետևանք է: Մեր երկրում շատերը ծանոթ չեն միջազգային փաստաթղթերին, այդ թվում նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի բովանդակությանը: Այս էին վկայում նաև «Ընդդեմ գենդերային բռնության Հայաստանում» ծրագրի

շրջանակներում մեր կողմից անցկացված իրազեկության բարձրացման հանդիպումները, որոնք կազմակերպվել էին Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի և Հայաստանի բժիշկ ուսանողների գիտական ասոցիացիայի համատեղ ջանքերով: Հանդիպումներն անց են կացվել տարբեր տարիքային խմբերի հետ՝ աշակերտների, ուսանողների, մեծահասակների: Առաջին խմբում ընդհանրապես չէին լսել կոնվենցիայի մասին, մյուս երկու խմբերում ներկայից մի քանիսը որոշ չափով ծանոթ էին կոնվենցիայի բովանդակությանը:

1979 թ. դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի կողմից ընդունված կոնվենցիան Հայաստանը վավերացրել է 1993 թ. հունիսին՝ ստանձնելով մի շարք պարտավորություններ, որոնք նախատեսում են գործողություններ՝ ուղղված խտրականության բացառմանը և քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային ոլորտներում կանանց համակողմանի զարգացման և առաջընթացի ապահովմանը: Միանալով կոնվենցիային՝ պետությունը պարտավորվում է համապատասխան քայլեր ձեռնարկել գիտակցության առավել խորքային բարեփոխման, տղա-

մարդկանց և կանանց վարքագծի սոցիալական և մշակութային մոդելների փոփոխման համար, ինչպես նաև պարտավորվում է ապահովել հավասար հնարավորություններ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների իրականացման համար:

Սակայն մեր երկրում այս կարևոր միջազգային փաստաթուղթը նույնիսկ իրավաբանների կողմից չի օգտագործվում որպես կանանց իրավունքների պաշտպանության գործիք: Հասարակությունը տեղեկացված չէ նաև իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ հնարավորությունների մասին, որոնք ընձեռնվում են կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ (այն ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2006 թ. մայիսին): Կամընտիր արձանագրությունը կանանց հնարավորություն է ընձեռնում ազգային բոլոր միջոցներն սպառելուց հետո անձամբ կամ կազմակերպությունների անունից բողոք ներկայացնելու կոնվենցիայի կոմիտե իրենց իրավունքների խախտման մասին:

Անցկացված իրազեկության բարձրացման հանդիպումների ընթացքում մասնակիցները մտահոգված էին՝ ինչո՞ւ մեր երկրում շատ քչերը գիտեն այս փաստաթղթի մասին: Իսկ այս փաստաթղթի մասին



բնակչության տարբեր խավերին իրազեկելը կոնվենցիայի պահանջներից մեկն է: Մտահոգիչ է այն փաստը, որ նույ-

կրթական, դաստիարակչական աշխատանքի միջոցով: Եվ այս աշխատանքը հարկավոր է սկսել դպրոցից, նույնիսկ

առաջնդման և կանանց նկատմամբ խտրական գործելակերպի հաղթահարման հարցում նրանց դերն աննշան է: Քաղաքացիների իրավական իրազեկության բարձրացման գործում կարևոր է ՀԿ-ների, իշխանական կառույցների և ՁԼՄ-ների համագործակցությունը, որը մեր երկրում թույլ է արտահայտված:

Այս գործում մեծ դեր կարող են խաղալ նման հանդիպումները, քանի որ դրանք անց են կացվել տարբեր տարիքային խմբերում, և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում:

Հուսով ենք, որ իրազեկության բարձրացման նման հանդիպումները կբերեն դրական տեղաշարժեր քաղաքացիների իրավական իրազեկության բարձրացման գործում, ինչը հնարավորություն կտա մարդ-

1. Մասնակից պեդրությունները չեղմարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը գրադավածության բնագավառում, տղամարդկանց և կանանց հավասարության հիման վրա միեկնույն իրավունքներն ապահովելու նպատակով, մասնավորապես.

ա) աշխատանքի իրավունքը՝ որպես բոլոր մարդկանց անկապրելի իրավունք,

դ) հավասար վարչապրության իրավունքը, ներառյալ՝ արտոնությունները, հավասարաբժեք աշխատանքի դիմաց հավասար մուրեցման իրավունքը, ինչպես նաև աշխատանքի որակի գնահատման դեպքում հավասար մուրեցման իրավունքը...

Հոդված 11, կետ 1, ԿՈՆՎԵՆՏԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՉԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

նիսկ այս հանդիպումների մասնակիցները, որոնցից շատերն ունենին բարձրագույն կրթություն, ծանոթ չէին կոնվենցիայի բովանդակությանը:

Քաղաքացիների իրազեկությունը միջազգային փաստաթղթերի բովանդակության մասին հիմնականում իրականացվում է կանանց և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ջանքերով: Անցկացված հանդիպումները ցույց տվեցին, որ այս ուղղությամբ հասարակական կազմակերպությունները դեռ շատ անելիքներ ունեն: Շատ կարևոր է փոփոխություն կատարել մարդկանց գիտակցության մեջ: Դա պետք է տեղի ունենա լայնածավալ քարոզչական, տեղեկատվական,

մանկապարտեզից: Հանդիպումներին մասնակցող աշակերտները դպրոցում անցնում

2. Մասնակից պեդրությունները չեղմարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը գյուղական շրջաններում, որպեսզի տղամարդկանց և կանանց հավասարության հիման վրա ապահովվի նրանց մասնակցությունը գյուղական շրջանների զարգացմանը և այդպիսի զարգացումից օգուտ ստանալուն...

Հոդված 14, կետ 2, ԿՈՆՎԵՆՏԻԱ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՉԵՎԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

են «Իրավունք» առարկան, բայց ոչ ոք չէր լսել կոնվենցիայի մասին:

Մեծ աշխատանք կարող են կատարել ՁԼՄ-ները, սակայն Հայաստանում գենդերային հավասարության գաղափարի

կանց պաշտպանված զգալու այն երկրում, որտեղ իրենք ապրում են:

Ռուզաննա Փանոյան
Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի անդամ, Վանաձորի մասնաճյուղ



Կոնվենցիան պետք է լինի հասանելի, իսկ պահանջները՝ օրախնդիր



35-ամյա տնտեսագետ Լ. Գալստյանն արդեն քանի տարի անհույս փորձեր է անում իր մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար: Իր իսկ բնորոշմամբ՝ «բախտը պարզապես չի բերում. մեկ տարիքը չի համապատասխանում, մեկ գործատուների պահանջներն են շատ բարձր, շատ դեպքերում էլ նախընտրում են տղամարդկանց, և ինքը չի դիմանում մրցակցությանը»:

Երեխաների ծնվելուց հետո տարիների ընդմիջումը բացասաբար անդրադարձավ՝ նրան դուրս մղելով աշխատաշուկայից:

Երիտասարդ կինն իր անհաջողությունների և փնտրտուքների մասին պատմեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի կողմից կազմակերպված հերթական հանդիպման ժամանակ, որին նա մասնակցում էր հրավիրյալի կարգավիճակով: Եվ որքան մեծ էր

նրա զարմանքը, երբ ծանոթացավ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիային, ՀՀ-ում այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումներին և քայլերին:

Լ. Գալստյանը միակը չէ. նրանման հազարավորները չեն էլ լսել կոնվենցիայի գոյության մասին, չգիտեն էլ, որ այն կանանց շահերի և իրավունքների պաշտպանության գործիքներից մեկն է: Մասնավորապես՝ տնտեսության ոլորտում արտացոլված են կանանց համար բանկային փոխառությունների, անշարժ գույքի գրավադրմամբ վարկերի և ամեն տեսակ ֆինանսական վարկերի ստացման երաշխավորման, զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ խտրականության վերացման, ընտանեկան կյանքում հավասար իրավունքների երաշխավորման, մասնագիտական պատրաստության աջակցման վերաբերյալ, մասնագիտական խտրազատությանը, աշխատանքի ընդունելիս խտրականության բոլոր ձևերի վերացմանն առնչվող դրույթներ:

Մինչ կառավարությունը կոնվենցիայի իրականացման որոշակի քայլեր է ծրագրում տնտեսության ոլորտում, իրականությունն առավել քան խոսում է:

Այսպես, Սևանի տարածաշրջանի զբաղվածության կենտրոնում 2008 թ. հունվարի 1-ի դրությամբ 1571 գրանցված գործազուրկներից 1193-ը կա-

նայք են, ընդ որում՝ 97-ը բարձրագույն կրթությամբ: 2009 թ. 2119 գործազուրկներից 1567-ը կանայք են, 110-ը՝ բարձրագույն կրթությամբ: Սրանք միայն պաշտոնական տվյալներ են և չեն արտացոլում թաքնված գործազրկության պատկերը:

Շատ դեպքերում անտեղյակությունն ու ոլորտի օրենսդրական դաշտին չտիրապետելը, իրազեկության պակասը խոչընդոտ են դառնում աշխատանք փնտրելիս, բիզնես ծրագրեր մշակելիս, անգամ վարձատրության ժամանակ:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան տալիս է երաշխիքներ բոլոր ոլորտներում, այդ թվում՝ տնտեսության: Սա այն փաստաթուղթն է, որը կառավարությանը զենդեղային հավասարության ապահովման պահանջ է ներկայացնում:

Հուսալ, թե կանայք կկարողանան ինքնուրույն գործել՝ տեղեկություններ հայթայթելով իրենց հետաքրքրող, իրենց շահերից բխող փաստաթղթերից, իրատեսական չէ:

Հիմնական ծանրությունն ընկած է հասարակական, մասնավորապես՝ կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ուսերին: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, շատ հաճախ կառավարության կողմից կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված քայլերի, ծրագրերի և



օրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկում չի իրականացվում: Ստացվում է, որ կանայք իրենց իսկ վերաբերող հարցերի մասին պատկերացում չունեն, և դա էլ դառնում է կանայականությունների նախապայման:

2006 թ. Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կատարած մոնիթորինգն էլ, որը նվիրված էր կոնվենցիայի իրականացման ընթացքին ու արդյունքներին, ոչ միայն գենդերային հիմնախնդիրների վերհանման լավագույն միջոց էր, այլև պետական կառույցների հետ երկխոսության, նրանց աշխատանքներին ու ծրագրերին մոտիկից ծանոթանալու պատեհ հնարավորություն:

Ցավոք, Ասոցիացիայի երաշխավորությունները՝ ուղղված իշխանական կառույցներին, որոնք, մասնավորապես վերաբերում են աշխատատեղերի քվոտավորման ներմուծմանը,

դժվար թե իրականություն դառնան այն դեպքում, երբ քաղաքացիական և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար գործում է մրցութային կարգ, և առավել բարձր դասային աստիճանները դեռևս շատ կանանց համար հասանելի չեն, որովհետև չունեն համապատասխան աշխատանքային փորձ:

Այժմ, երբ համաշխարհային տնտեսական ճգնաժամը դարձել է համատարած կրճատումների պատճառ, խոսել կանանց աշխատանքից հեռացնելը բացառելու մասին, դարձյալ իրատեսական չէ: Դա ունի իր բացատրությունը. կրճատման ալիքը ամենից առաջ և ամենաշատը վնասում է հենց կանանց, և նրանք համակերպվում են՝ երբեմն որևէ քայլ չձեռնարկելով:

Կոնվենցիայի պահանջների կենսագործման և ժամանակի մարտահրավերները հաղթահարելու ճանապարհին կանանց կազմակերպությունները պետք է համախմբված լինեն և հստակ գործելաճանճ ունենան: Ասոցիացիան այս և մյուս բոլոր հիմնախնդիրները դիտարկում է ամբողջության մեջ, ասելիք ունի և կարողանում է այն հավուր պատշաճի ներկայացնել:

Սակայն գենդերային հավասարության խնդիրների լուծումը պետք է ոչ թե մեկ-երկու կազմակերպության, այլ ողջ հասարակության ուսերին ծանրանա: Իրազեկության բարձրացումը հնարավորություն կտա, որ յուրաքանչյուր կին դառնա սեփական իրավունքների պաշտպանը և կարողանա իրավիճակային խնդիրները կարգավորել հոգուտ իրեն: Ժամանակն է պասիվ դիտորդից դառնալ ակտիվ մասնակից:

Արմինե Ղուկասյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի փոխնախագահ

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց շարժումը հազարամյակի խաչմերուկներում. նոր մարտահրավերներ և ռազմավարություններ» ծրագրի շրջանակներում Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի աջակցությամբ

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում հեղինակներին հոդվածները տրամադրելու համար

Համարը պատրաստել են **Չենմա Հասրաթյանը, Իրինա Շահինյանը**
Համարը խմբագրել է **Անահիտ Հարությունյանը**
Ձևավորումը՝ **Արթուր Բոյախյանի**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա:
Երևան 0002, Մարյան 22
Հեռ./ֆաքս՝ (37410) 53-68-02
Email: jemma.hasratyan@gmail.com, aawue@arminco.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» ՍՊԸ տպարանում:
Երևան, Ավան, Դավիթ Մալյան 45
Հեռ՝ 54-49-82 (գրասենյակ), 62-38-63 (տպարան)